



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### **Usage guidelines**

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.


We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

### **About Google Book Search**

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

**B** 1,211,539






# ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի

Գրեց՝ ռուս պատմաբան Վ. Գոտտո

Ռուսերէնից թարգմանեց՝ Գ. Գ.



(Արտատպ. « Բանասէր » հանդիսից)

Գ Ա Ր Ի Ս

1904



ՆԵՐՍԷՍ Ե. ԱՆՏԱՐԱԿԵՑԻ

# Վ Ե Ր Ա Ծ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ (\*)

Այն օրից, երբ Հայաստանը վերջնականապէս կորցրեց իւր քաղաքական անկախութիւնը, չդադարեցան շարունակ նորա միջից հայրենի կրօնի եւ ազգութեան համար եղած մշտատանջ եւ դարեւոր պատեւրազմները :

Բնական էր, ուրեմն, որ այդ սակաւաթիւ ազգը զեզերուած եւ նեղուած իւր շրջակայ անհամար մահմետական ցեղերի ձեռքին, զգար եւ խոստովանէր, թէ անհրաժեշտ է իւրեան կապել իւր գոյութիւնը մի քրիստոնեայ հզօր ազգութեան կեանքի հետ :

Բայց ոչ մի տեղից օգնութիւն սպասել կարելի չէր : Արեւելքից, հարաւից եւ արեւմուտքից մահմետական ցեղերն էին ամուր պատնէշի նման բաժանել նորան քրիստոնեայ աշխարհից . հիւսիսումը իւր նման տառապում էր քրիստոնեայ Վրաստանը, ոյժ չունելով դիմադրել շարունակ յարձակմունքներին, եւ միայն Կովկասեան շղթաների միւս կողմը գտնուում էր մի զօրեղ տէրութիւն, որ սասանեցրել էր Թաթարներին եւ իւր իշխանութիւնը տարածել էր մինչեւ Վօլգայ մեծ գետի բերանը, մինչեւ Կասպից ծովի ափները : Այդ իսկ պատճառաւ Հայաստանի աչքը ձգտում եւ յառում է դէպի հիւսիս :

Հայերը շատ վաղուց էին վաճառականական յարարերութիւն սկսել Մոսկովայի տէրութեան հետ, դարերի հետ յառաջանում էին նորանոր խաղաղութեան դաշինքներ երկու աղգերի մէջ — նորանոր արտօնութիւններ, որ Ռուսաց Թագաւորները շնորհում էին հեռաւոր հարաւի այս վաճառաչան ազգին : Ալէքսէյ Միխայլովիչ Թագաւորի օրերը նշա-

(\*) Կովկասեան պատերազմ. հեղինակութիւն Վ. Պետրոյի, հատոր Գ. Պարսկական պատերազմ 1826—28, Դ. գիրք, Ս. Պետեր. 1882 ամի :

նաև որ եղան Հայերի համար թանկագին մի կարգ հրովարտականերով եւ արքունի հրամաններով, որոնցով եւ ամրացաւ Հայերի բարոյական եւ նիւթական կապը Ռուս ազգի հետ :

Մեծն Պետրոս առաջինը քաղաքական տեսակէտից աչք դարձրեց Հայերի վերայ, նորա հանձարը նախատեսեց Ռուսաստանի ապագայ դերը Հայ ազգի վիճակը տնօրինելու : Եւ ահա այս իսկ լուպէից սկսում է Ռուսաց թագաւորների եռանդուն քաղաքականութիւնը Հայոց աշխարհի վերաբերութեամբ :

Ինչ Դերբէնդի պատերազմից շատ յառաջ Ղարաբաղի մէլիքներից մի քանի պատգամաւորութիւններ դիմում են Պետրոսին նորա պաշտպանութիւնը խնդրելու : Նոքա միաձայն հաւատացնում էին, թէ Ռուսաց զօրքն իւրեանց մօտենալուն պէս Հայ աւագանիքը զօրաժողով կանեն նախիջեւանումը եւ թագաւորական դրօշակը վերցրած՝ 24 ժամի մէջ կը հալածեն անհաւասներին, իսկ 15 օրուայ մէջ կտիրեն ամբողջ աշխարհքին : Երեւանն առնելն այն ժամանակ շատ հեշտ կը լինի, հաստատում էին նոքա, որովհետեւ այնտեղ մեծ բաղմութիւն կայ, Հայերի եւ նոցա ձեռքին է վառօղի պահեստն եւ ուրիշ պաշարները : Վերջապէս ասում էին, Հայաստանը կարող է մինչեւ 116000 զօրք դուրս բերել, ըստ որում թուրքաձայերն էլ օգնութիւն կհասնեն պարսկահայերին :

Այն օրից, երբ Դերբէնդը նուաճուեց Ռուսաց սրի տակ եւ Ռուսական բանակը պատրաստուեցաւ տիրել Պարսկաստանի հիւսիսային գաւառներին, կարծես թէ Հայի ազատութեան արշալոյսը աւելի փայլուն եւ լուսաւոր ճառագայթներ սկսեց արձակել :

Արդէն 12000 Հայեր Ղարաբաղի մէլիքների առաջնորդութեամբ եւ 30000 Վրացիք իւրեանց Վախթանգ թագաւորի հետ միասին պատրաստ սպասում էին Գանձակումը Ռուսաց թագաւորի հրամանները կատարելու :

Հրճուում էր այս քրիստոնեայ բանակը, նոցա կարծիքով աներկբայ եկել հասել էր պարսկական լծից իւրեանց ազատութեան ժամը : Սակայն կայծակի հարուածից աւելի խիստ հնչեցաւ նոցա ականջին այն բօթաբեր լուրը, թէ Պետրոսը չը վերջացրած իւր սկսած գործը՝ վերադառնում է Կովկասից : Ինչպէս Հայոց Նսայի մետրապօլիտը վկայում է, նոքա հաւատ ընծայել չէին կամենում այդ լրին եւ չէին էլ կարողանում հասկանալ, թէ ի՛նչ պատահեցաւ. ոմանք ասում էին, թէ Ռուսները տկարացան եւ վերադարձան, այլք՝ թէ սաստիկ շոքից նոցա հեծելազօրքի ձիանքը կտորուեցան, միւսները՝ թէ ծովումն ալեկոծութիւն է պատահել եւ թնդանօթածիգ զօրքը իւր պաշարով ցրասոյց է եղել :

Դերբէնդից Պետրոսի անակընկալ վերադարձը խորին վիշտ պատճառեց հայ եւ վրացի զօրքերին, նոցա հոռանդը մեռաւ : Վախթանգն իւր բանակովը յետ եկաւ, շատ չը քաշեց Լեզգիները պաշարեցին Տփլիսը :

անառիկ ամրոցներում՝ մի քանի տարիներ ատկուն դիմադրութեամբ՝ սարսափելի պատերազմներ մղեցին ազատութեան համար Տաճկաց, Պարսկաց եւ լեռնական լեզգի հրոսակների դէմ :

Պետրոսի յուսով Հայոց սկսած այս պատերազմը , թէեւ Պետրոսից պաշտպանութիւն չը գտաւ, սակայն սկիզբը դարձաւ նոցա համար անկախութիւն ձեռք բերելու անվերջ փորձերին :

Անդրկովկասի քրիստոնեայ ազգաբնակութիւնների համար մի ծանր հարուած եղաւ այն , որ Պետրոսը Տաճկաց հետ կապած պայմանին համաձայն իւրեան սեպհականեց միայն Կասպեան ափունքը, իսկ Հայոց եւ Վրաց բոլոր գաւառները թողեց Տաճկական Բարձրագոյն Դրանը , որն ի հարկէ ամենայն իրաւամբ, գրգռուած էր քրիստոնէից դէմ դէպի Ռուսաստանը նոցա սաժած համակրութեան համար :

Թշուառութեան ամպերը կուտակուել էին չարաբաստիկ աշխարհի գլխին : Ռուսաստանը չէր կարողանում զէնքով նորան օգնել : Դեռ նորահօր զօրութիւնը ընդարձակելու ժամը չէր հասել . դեռ այդ ժամանակն նա ինքն էլ նոր էր սկսում ամրապնդուիլ . բայց եւ այնպէս Հայ ազգի վիճակն ըստ առաջնոյն անմոտանալի էր կայսեր օրտին , եւ նա բաց արեց լայն եւ արձակ իւր կայսրութեան դռները հայ զաղթականութեան առաջին :

Ռուսները օրհնելով Դերմէնդին , Բագուին , Ասարաբատին , Գիւլանին եւ Մաղանդարանին պէտք է հոգային որպէս զի խրեանց ձեռք բերած այս երկիրները պինդ պահպանեն նիւթական բարօրութեան արգիւնքներով եւ խաղաղ գործունէութեան պատուներով , եւ ահա այս վստի սկզբունքը դարձաւ Պետրոսի ապագայ քաղաքական ծրագրի հիմունքը . եւ նա ամենայն ջանք ի դործ դրեց քաշել Հայերին դէպի այս երկիրները : Ահա ի՞նչ է գրում Պետրոսը Մատիւշկինին՝ նոր օրհնութեամբ երկիրներում մարդաբնակութիւնն աւելացնելու համար . « Ամենայն կերպիւ աշխատեցէք հրաւիրել Հայերին, իսկ մուսուլմանների թիւը, որքան հնար է, պակասեցնել, բայց այնպէս գաղանի միջոցներով, որ իւրեանք ոչինչ չհասկանան :

Եւ ահա ի հրաւէր Պետրոսի հարիւրաւոր Հայեր ձգտում են դէպի Գիւլան եւ Սուրբ Խաչի բերդը :

Դրում էր Պետրոսն իւր մերձաւորներին , որ նոր գաղթածներին ամենատեսակ արտօնութիւններ շնորհեն, ամենալաւ հողերը, ուր նոքա ցանկանան, նորանց յատկացնեն, հարստահարութիւններից եւ ճնշումներից պաշտպանեն . — « ըստ որում — գրում է մեծ կայսրը — մենք ընդունել ենք այդ Հայ ազգին մեր կայսերական առանձին ողորմածութեան եւ հովանաւորութեան ներքոյ : »

Առհասարակ այն ժամանակուան բոլոր վկայագրերի մէջ պարզ արտաստուում է Պետրոսի հայեացքը , թէ ի՞նչ օգուտ էր սպասում նա

խելացի եւ վաճառաչան Հայ ազգին ուսաց կայսերութեան մէջ վերաբնակեցնելուց :

Առաջին անգամի գաղթականներից 700 մարդոց չափ անմիջապէս մտան Ռուսաց զինուորական ծառայութեան մէջ եւ կազմեցին երկու առանձին գնդեր , Հայերը՝ Դրագունի եւ Վրացիք՝ Հուսարի գունդը :

Բայց այն ինչ Հայոց մի աննշան մասը ապաստան էր գտել Ռուսաց սահմաններումը, ամբողջ ազգաբնակութիւնը հեծում էր նեղութեան մէջ . նորա ուժից վեր էր կստել մահմետականութեան հետ եւ նա օգնութիւն էր խնդրում : « Մինչեւ ցայսօր , գրում են Հայերը Պետրոսին , չորս կողմից շրջապատուած լինելով թշնամիներով , մենք պաշտպանուում էինք , որքան մեր ոյժը ներում էր , իսկ այժմ Տաճիկները մեծ զօրքով հկել տիրել են պարսկական շատ քաղաքներին . . . »

Դժբաղդաբար այս վերջին պատգամաւորութիւնը կենդանի չըգտաւ Ռուսաց հանձարեղ կայսերը :

Պետրոսի յաջորդների անվստահ քաղաքականութեան շնորհիւ Հայ ազգի վիճակն աւելի դառնացաւ :

Ֆելդմարշալ իշխան Դօլգորուկովն ինքն է վկայում այն արիական ճակատամարտների մասին , որ մի ժամանակ ունեցան Հայերը Տաճկաց , Պարսից եւ լեռնականաց հետ : Այդ մի հերոսական պատերազմ էր : Մի բուռը Հայեր ութն օր շարունակ դիմադրում էին սարասկեար Սարի-Մուստաֆայի 10000 տաճկական արիւնոուշտ բանակին :

Նոյն Դօլգորուկովն իւր զեկուցագրի մէջ աւելացնում է , թէ Հայերը պահանջում են շօշափիլի եւ իրական օգնութիւն զէնքի զօրութեամբ , եւ եթէ այժմէն իսկ այդ օգնութիւնը նոցա զլացուի եւ չը տրուի , արդէն ուշ կը լինի ապագայումը գրաւել նոցա մեր կողմը :

Եթէ քաջեռանդն իշխան Դօլգորուկովը մնար կովկասումը , շատ կարելի է այս երկրի վիճակն այլապէս տնօրինուէր :

Բայց Դօլգորուկովն ընկաւ . կայսրուհի Աննա Յովհանովնան անուշազիր գտնուելով պաշտպանելու Մեծն Պետրոսի նպատակի իրագործումը , վճռում է միանգամայն ձեռնաթող անել նորա նուաճած երկիրները :

Ռուսաց զօրքը նահանջում է դէպի Թերեքի ափունքը , իսկ Հայերը կրկին Տաճիկների ձեռքից ընկնում են Պարսից իշխանութեան ներքոյ :

Նոր տիրապետողներին երկիւղը ստիպում է շատ Հայերի Ղարաբաղի ոքանչեյի բնութիւնը , նոցա օգն ու ջուրը փոխել Թերեքի ճահճային այլերի հետ : Այն սեղ են ձգտում անմիջապէս զօրքի տեսից նոքա եւս , որոնք բնակութիւն էին հաստատել Գիլանումն եւ Սուրբ Խաչի մերգումը :

Այսպիսով է անա կազմակերպուում Ղզլարի Հայ գաղթականութիւնը Թերեքի փիւն :

Գուցէ չափազանց կաւելանար գաղթականների թիւը , եթէ կայսրուհի Աննա Յովհանովեան ի հաճոյս Նադիր Շահի մի հրովարտակ չըհրատարակէր 1734 թուի , մայիսի 29ին, որով ի նշան բարեկամութեան առ Շահն եւ բարեհաճութեան առ Պարսից ազգն հրամայում էր , Պարսկաստանից դուրս եկած բոլոր Վրացիներին, Հայերին եւ ուրիշ օտարազգիներին վերադարձնել կրկին Շահին, — մինչեւ անգամ նոցա եւս, որոնք վերադառնալու ցանկութիւն չունին :

Եւ թէպէս կայսրուհի Աննայի կառավարութեան այս անբացատրելի սխալմունքը մի քանի տարուց յետոյ փոքր ի շատէ ուղղուեցաւ մի առանձին հրովարտակի շնորհիւ, որով արգելուում էր ուսանապատակութիւն ընդունող Հայերին Պարսիկներին յանձնելու, բայց առաջին կարգադրութեան սպաւորութիւնը երկար մամանակ չէր ջնջուում հայ մըտքերից :

Այսպէս թէ այնպէս, Հայերի յուսոյ միակ յենակէտը, այնու ամենայնիւ, Ռուսաստանը պէտք է լինէր . նա միայն իւր հովանաւորութեամբ կարող էր պաշտպան հանդիսանալ հայ շահերին :

Եւ անա մի քանի տարուց յետոյ 1760 թուին Անգլիայից Ս. Պետերբուրգ է գալիս էմին Յովսեփեան անուամբ հարուստ Հայը , որ Հնդկաստանում անագին միլիոններ էր գրգել : Նա խնդրում էր օգնել Հայերին իւրեանց անկախութիւնը ձեռք բերելու, իսկ այս բանի համար առաջարկում էր իւր ամբողջ կարողութիւնը :

Բայց կայսրուհու կառավարութիւնը նպատակ չունէր այդ ժամանակ Կովկասի գործերում էապէս խառնուելու : Այդպիսով էմինի առաջարկութիւնը համակրութիւն չը գտաւ :

Այս վիճակի մէջ միացին գործերը մինչեւ մեծն Եկատարինէի թագաւորելը :

Նորա ժամանակ, երբ հարաւային Ռուսաստանի ընդարձակ ամայի դաշտերը մարդաբնակութեամբ լցուեցան , Կովկասի այս կողմը (դէպի Ռուսաստան) հաստատում է հայկական գաղթականութիւն, ուր հիմնուում է մի նշանաւոր քաղաք, որ վերակենդանութիւն է տալիս այն սակաւամարդ անադատ երկրին : Այդ ժամանակն էր, որ 20000 Հայեր բարձի թողի արած տաճկական Ղրիմը գալիս են Դօնի եզերքը :

Արժան չը նստաւ Հայերին այս գաղթականութիւնը , անագին կորուստ , զրկանք եւ զոհողութիւններ բաժին ընկաւ նորանց :

Երկու շարունակ տարիներ թափառում են Հայ գաղթականները վրանների տակ Սամարայի եւ Եկատարինասլաւի շրջակայքում համբերութեամբ տանելով ցուրտը , սոթը եւ քաղցը . նորանցից շատեր չը գրեացան թափառականութեան ժանր հարուածներին եւ մեռան՝ աղեկէզ

սրաւիւ յիշելով իւրեանց հայրենի Ղըրիմը , նորա վանքերն ու եկեղեցիները . իսկ միացածներն այնու ամենայնիւ հաստատուն քայլերով դիմեցին դէպի իւրեանց նպատակը եւ վերջապէս Դօն գետի ափին հիմնեցին Նախիջեւան քաղաքը , ուր կառավարութիւնը անխնայ շտալեց նորանց արտօնութիւններ , օգուտներ եւ իրաւունքներ :

Բայց օգուտներից եւ արտօնութիւններից առաւել Հայերին գրաւում էր մի յոյս , բարոյապէս հանգստութեան մի յոյս , մի կրօնական ազատութիւն եւ քրիստոնեայ պիտութեան մէջ կառավարչական հաստատուն օրէնքներով իւրեանց շահերին պաշտպանութիւն . — ահա՛ ինչ յոյս էր , որ նոցա քարշում էր :

Ճիշդ այդ միջոցումը Եկատարինան , կարծես , կամեւով վերակենս դանացնել Պետրոսի գաղափարը , դարձնում է իւր ուշքը դէպի Անդրկովկաս :

1783 թուին Ռուսաց զօրքը գրաւում է Վրաստանը եւ այն օրից նա դառնում է Ռուսաստանի աւատական թագաւորութիւն :

Այդ ժամանակն ահա ծրագիրներ են կազմում Հայաստանի ազատութեան համար եւ ամենահզօրն Պօտեմկին սկսում է ջերմ հաղորդակցութիւններ շարունակել Հայոց Յովսէփ Արք Եպիսկոպոսի հետ , Ասիայումը Հայաստանը մի հզօր քրիստոնեայ տէրութիւն դարձնելու մասին՝ Ռուսաց բարձրագոյն հովանաւորութեան ներքոյ :

Այսպէս նորից Հայոց խնդիրը ասպարէզի վերայ է դրուում :

Պաշտօնական շատ փաստերով ապացուցուած տեղեկութիւններ կան , որ ինքն իշխան Պօտեմկինը ձգտում էր թագաւորել վերածնած Հայաստանին , որը սահմանակից պէտք է լինէր Պարսկաստանին , Տաճկաստանին եւ Ռուսաստանին եւ ունենար կասպից ծովումն իւր նաւահանգիստը :

Արդէն արտասահմանումը — Հնդկաստանում եւ Չինաստանում՝ նա ոսկեզօծ ամանեղէններ էր պատրաստել տուել հայ թագաւորական զինանշաններով(\*) :

Այն միջոցում տպագրուած Հայոց դրքերի վերայ տպուում էին հայ թագաւորաց դրօշները :

Յովսէփ Արք Եպիսկոպոսը նամակներ գրում էր էջմիածնի կաթողիկոսին եւ շատ երեւելի հայերին ուրախ լինելու . Աստուծուն փառք տալ . նա աղօս կերպիւ մատնացոյց էր անում մի նշանաւոր փոփոխութեան վերայ , որ պատրաստուում էր Հայերի համար՝ մեծահուշակ Հիւսիսի հոգատարութեան շնորհիւ :

Բանը նորանումն է , որ Յովսէփ Արք Եպիսկոպոսին առաջարկեցին

---

(\*) Մի այդպիսի յախճապակեայ սափոր հայ դրօշը (եւրան՝ պահուում է Տփլիսի թանգարանում :

կազմել այն դաշնագրի ծրագիրը, որ պէտք է կապուէր նախապէս Ռուսաց կայսերական եւ Հայ ազգի մէջ :

Այս հետաքրքիր դոկումենտի մէջ առաջին տեղը բռնում էր Հայ եկեղեցւոյ լիակատար անկախութիւնն եւ ազատութիւնը եւ Հայաստանի ընտրեալ թագաւորը — լինէր նա Հայ, թէ կայսրուհու մերձաւոր անձնուէրներից մէկը — պարտաւորուում էր դաւանել հայ կրօնը եւ պահպանել հայ օրէնքները :

Թագաւորի թագադրութիւնը առաջարկուում էր կատարել Ս. Էջմիածնի մէջ, ըստ օրինաց Հայոց նախկին թագաւորաց :

Մայրաքաղաք որոշուում էր Անին կամ Էջմիածինը: Հայ թագաւորութեան դրօշը պէտք է կաղմուէր Հայոց նախկին երեք դրօշներից՝ այն է՝ Արշակունեաց միագլուխ արծիւը, քրիստոնէութեան ժամանակի Փառն Աստուծոյ եւ Փոքր Հայոց երկու առիւծները :

Ի յիշատակ Հայաստանում տեղի ունեցած երեք փառաւոր պատմական զէպքերի, Հայաստանում հաստատուում էր երեք շքանշան, առաջինը՝ Նոյեան սապանի անուանով՝ ծիածանին նմանացրած երեք գոյնով — կարմիր, կանաչ եւ կապոյտ, երկրորդը սուրբ Գրիգոր Լուսաւորչի անուանով եւ երրորդը՝ ի պատիւ Փրկչական անձեռագործ դաստառակի :

Քաղաքականապէս տնօրինուում էր, որ Հայաստանը գտնուի Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ: Մի փոքրաթիւ ռուսական բանակ պէտք է մնար Հայաստանի մէջ՝ նորա սահմանները Տաճկաց եւ Պարսից արշաւանքներից պաշտպանելու աղաքաւ, իսկ Հայ թագաւորների որդկերանցից մէկը մնալու էր շարունակ կայսեր պալատում: Հայոց թագաւորութիւնը պարտաւորուում էր իւր հանքերից արտահանած ոսկուց եւ արծաթից մի որոշ մասն յատկացնել Ռուսաստանին: Պատերազմական զէպքերում երկու պետութիւններն եւս պարտական էին միմեանց օգնութիւն տալ :

Այս դաշնագրութեան մի ամենահետաքրքիր յօդուածն այն էր, որ, Հայերը պահանջում էին, որ իւրեանց աշխարհի մէջ ստրկութիւն չը ներս մտնէր, ինչպէս իւրեանց ազգային բնաւորութեան մի տարօրինակ եւ հակառակ երեւոյթ: Այս մասին նոքա մտանացոյց էին անում իւրեանց պատմութիւնից այն զէպքը, որ երբ Յոյները տիրելով Հայաստանին կամեցան Հայերից ստրուկներ տակ իւրեանց իշխաններին, Հայերը թողին նորանց եւ մտան Բաղդատու խալիֆների հպատակութեան ներքոյ, առաւել գերադաս համարելով խալիֆների ծանր քաղաքական ճշնշումները իւրեանց ներքին ընտանեկան ազատութեան կորստից :

Այս ծրագիրն իրագործելու համար մեծ զօրութիւն եւ զրամական ոյժ էր հարկաւոր. միակ յոյսը բնականապէս էմին Յովսէփեանի առաջարկութիւնն էր, որ մի քանի տարի առաջ նուիրում էր իւր մելիօսները Հայաստանի ազատութեան գործին: Սակայն էմինը կենդանի չէր

այժմ եւ նորա հարստութիւնը ժառանգական ցեղը վերջանալու օրէնքին համաձայն մնացել էր Օստ-ինգիական բանկին :

Այս անգամին եւս գտնուեցաւ ոմն Շամիր-խան՝ նոյնպէս Հնդկահայ, որ իւր լիքը քսակը առաջարկեց Հայաստանին: Սակայն ըստ նորա կարծեաց պատերազմ սկսելու կարիք չը կար, հարկաւոր էր ոսկւով գնել Հայաստանը Տաճկաստանից եւ Պարսկաստանից :

Այս մեծահարուստ անձը առաջարկում էր Բօրչալուում, Լօռում եւ Երեւանի նահանգում մշակել լեղակ, շաքարի եղէգն, բամբակ եւ սուրճ, հիմնել գործարաններ եւ այդպիսով դարերով աւեր եւ քարուքանդ աշխարհին միանգամից վերակենդանութիւն տալ :

Ուրեմն դրամագլուխն ի նկատի եւ պատրաստ էր եւ մնում էր գործ սկսելը :

Վճռուեցաւ սկսել Ղարաբաղի խանութիւնից — այն է՝ գահավէժ անել Իպրահիմ խանին եւ նորա տեղը հայ կառավարիչ կարգել : Բուն ձեռնարկութիւնը զիսաւորութիւն կար սկսել առաջիկայ 1784 թուի ամառը եւ զօրքն արդէն պատրաստուում էր :

Բայց այն ինչ ծրագիրը գրուում էր եւ իրագործութեան պատրաստութիւններ տեսնուում էին, քաղաքական հանգամանքները խիստ խճճուեցան :

Օմմար խանը աւերում է Վրաստանը, չը նայելով որ Ռուսաց զօրքն այդ ժամանակ նստած էր այն տեղ եւ պատրաստուում է դիմել Ղարաբաղի վերայ : Ռուսաստանն այդ միջոցումն երկրորդ Տաճկական պատերազմն է սկսում եւ էլ հնարաւորութիւն չի ունենում Վրաստանը պաշտպանելու :

Հայաստանը նորից բարձի թողի մասնուում է իւր ճակատագրին եւ իւր ձգտումները համար ենթարկուում է վրէժխնդրութեան հարուածներին : Պարսիկներն ու Ղարաբաղի Իբրահիմ խանը սարսափելի հալածանքներ եւ բռնութիւններ են գործ դնում Հայերի դէմ : Հայաստանը նորից արիւնշաղախ է լինում, Ռուսաստանին հաւատարիմ եւ անձնուէր մնացած բոլոր մէլիքները կոտորուում եւ խպառ ջնջուում են եւ մի քանիսին միայն յաջողում է փախչել Տփլիսի Հերակլ թագաւորի մօտ :

Ոչ Հայերն եւ ոչ Ռուսաց կառավարութիւնը չէին կարողանում այնու ամենայնիւ հրաժարուել այն նուիրական գաղափարից, այն նպատակից, որ պատմական հանգամանքների ընթացքներն ստեղծել էին եւ Մեծն Պետրոսը նախատեսել էր :

1796 թուին պարսկական պատերազմից յառաջ դիլիսաւոր հրամանատար կոմս Զուբովի անուհով գրուած հրովարտակում (րէսխրիւս) ասուած է, թէ Ռուսաստանը զէնք է բարձրացնում հնադարեան քրիստոնէայ Հայ եւ Վրաց թագաւորութիւնների ազատութեան համար : Բայց, ինչպէս յայտնի է, այս փառաւոր պատերազմը նոյնպէս անյաջող վախճան ու-

նեցաւ : Պաւլոս կայսրը, անակընկալ կերպիւ յետ կոչեց իւր զօրքերը եւ Նկատարինէի բոլոր ծրագրերը, որոնք այս ձեռնարկութեան հիմունքներն էին կազմում, միանգամից հող ու մոխիր կտրուեցան : Ռուսաց զօրքը նորից բարձի թողի արեց Անդրկովկասը եւ այս անգամ այս երկիրն Աղայ Մահմադ խանի բարբարոսութեանցն ուղղակի զոհ անելու համար : Անկարձեք Լանգթամուրեան ոչ մի աւերածութիւնները չէին կարող հաւասարուել այն սարսափելի արիւնհեղութիւններին, որ Աղայ Մահմադ Շահը պատրաստում էր Հայաստանի գլխին թափելու, եթէ մարդասպանի սուբը 1797 թուի ամառը վերջ չը դնէր նորա արիւնածարաւ մտադրութիւններին :

Բայց, ինչպէս մօտիկ անցեալի փաստերը ցոյց են տալիս, երեք չորս տարի անցնելուց յետոյ այսպիսի վսեմ եւ դժուարալուծելի խնդրի կէտն ինքն ըստ ինքեան ի գլուխ եկաւ — Վրաց թագաւորութիւնը Գեօրգի թագաւորի մահից յետոյ միացաւ Ռուսաստանի հետ :

Այս հանգամանքը մօտեցրեց Հայաստանի ազատութիւնը, բայց միայն արմատից փոփոխութեան ենթարկելով նախկին ծրագրերը : Այժմ Ռուսաց իշխանութեան տակ մի աւատական ինքնուրոյն թագաւորութիւն հաստատել եւ այն Ռուսաստանին միացած Վրաստանին սահմանակից, այդ մասին մտածելն անգամ աւելորդ էր :

Բուն Վրաստանում Ռուսաստանի հետ միանալու ժամանակը Հայերի թիւը համեմատաբար մեծ չէր, բայց յետոյ սկսեց արագապէս աճել եւ բազմանալ :

Իշխան Յիցիանովի օրովը, չը նայելով որ այս նշանաւոր անձնաւորութիւնը մի առանձին մեծ ատելութիւն էր զգում դէպի Հայերը, նրանցից հազարաւորները գաղթեցին Վրաստան եւ ընդունեցին Ռուսաց հպատակութիւն :

Պարսիկների հայածանքներից հարիւրաւոր Հայեր փախչում էին Պարսից սահմանակից խանութիւններից, կորստի մատնելով բոլոր իւրեանց կարողութիւնն եւ սկզբակաւութիւնը :

Զրկուած գոյով ամենատեսակ նիւթական օգնութիւնից՝ նոքա, որպէս եւ իցէ, պատասպարանք էին գանում, ի հնուց Վրաստանում բնակուած համազդիների մօտ, բնակութիւններ էին հաստատում ամայի աւերակներում եւ մինչեւ սարուկ եւս գրուում էին :

Յրտից, սովից, մահատանջ տենցից հարիւրներով էին մեռնում, իսկ 1804—1805 թուերի ժանտախան խեղճ թշուառների քառորդ մասն էլ չը թողեց : Բայց եւ այնպէս Հայերը բնակութիւն հաստատեցին Թելաւի, Մղնախի, Բօրչալուի եւ Լօռու գաւառների այն տեղերումը, որոնք զուրկ էին խաղաղ երկրագործ եւ աշխատասէր ձեռքերից :

Պարապելով հողագործութեամբ՝ միամտամանակ նոյն Հայերը առաջ-

առաջն էին առնում, թշնամու բանակից տեղեկութիւններ էին բերում, պաշար էին հայթայթում եւ կարեւոր ժամանակը քաջարար կոռում էին Ռուս զօրքերի հետ միասին նոցա թուումը :

Յիցիանովի եւ Գուդովիչի Գանձակի եւ Երեւանի դէմ մղած պատերազմներում Յովհաննէս Արքեպիսկոպոսը եւ Ներսէս վարդապետը ժողովեցին հայ զինուորախումբ 1500 մարդից կազմուած եւ իւրեանք գլուխ կանգնեցան սպառազինութեանը :

Հայերը շարունակ դաժնուում էին յառաջապահ գնտի մէջ . նոքա էին, որ յարձակումն արին Գանձակի վերայ եւ 1804 թուի, յունիսի 20ի նշանաւոր պատերազմումը, երբ Յիցիանովը ջարդեց Պարսից բանակը, նոքա մեծ կորուստ ունեցան : Կարեազինը, Կապիարուսկին եւ մինչեւ անգամ ինքը Յիցիանովը, որ ինչպէս ասացինք շատ առեկութեամբ էր վերաբերուում դէպի Հայերը, միաձայն վկայում են՝ իւրեանց օրով Հայոց կատարած մեծամեծ յաղթութիւնների մասին :

Ամենից նշանաւորն այն էր, որ Ռուսները Հայերի մէջ գտան իւրեանց համար յուսալի բարեկամներ, որոց վերայ կարելի էր վստահ լինիլ :

Րտիչեվը գրում էր, որ « Կախեթայի խռովարար ապստամբութիւնների ժամանակ, Հայ ազգը, որ Վրաստանի մարդաբնակութեան նշանաւոր մասն է կազմում, անյողողղ մնաց հաւատարմութեան մէջ եւ զոհելով իւր կարողութիւնը՝ մինչեւ կեանքն եւս, կուռեց ապստամբները դէմ եւ բավիցս աղայուցեց իւր քաջութիւնն ու անկեղծ անձնութեանը : »

Ալէքսանդր կայսրը բարձրագոյն հրովարտակով 1813 թուի պատասխանեց վերոյիշեալ յայտարարութեանը հետեւեալ խօսքերով . « Վրաստանում բնակուած բոլոր իմ սիրելի եւ հաւատարիմ հպատակ Հայ ազգին . » « Հայ ժողովուրդն իւր բոլոր դասակարգերով, (ասուած է այն հրովարտակի մէջ,) բազմադիմի հանգամանքներում եւ հաստատուն հաւատարմութեան ամեն դէպքերում ապացուցեց իւր անկեղծ անձնութեան եւ գոհունակութեան զգացմունքը, եւ երբ թեթեւամտութիւնը եւ չարանպատակ անհաւատարմութիւնը աշխատում էին ամենուրեք խախտել Վրաստանի մէջ մեր թագաւորեցրած խաղաղութիւնը, Հայերը գերազանց հանդիսացան իւրեանց օրինակելի սոկունութեամբը եւ հաւատարմութեամբը . այն խառնաշփոթ հանգամանքներով մէջ նոքա հաստատուն եւ ամուր եւանդ ցոյց տուին դէպի մեզ եւ մեր դահը, զոհելով յօգուտ մեր կառավարութեան եւ հասարակաց բարօրութեան, ոչ միայն կայք ու կալուածքները, այլ եւ իրանց կեանքը՝ ~~Թող անմոռաց մնայ ապագայի յիշողութեան մէջ այս վկայութիւնը ի պատիւ եւ ի փառս նոցա :~~ »

առանձին նշանը, որ պէտք է յազգէ ազգ անջինջ մնայ Հայ ազգի սըր-  
տում՝ իբրև ապացոյց անձնութեան առ Ռուսաց զահն, մեծահոշակ  
կերպիւ յայտնուէր ազգին: Եւ ահա, նոյն թուի, նոյեմբերի 22ին Հայոց  
բոլոր նշանաւոր իշխանները եւ պատուելի քաղաքացիք հրաւիրուեցան  
գլխաւոր հրամանատարի տունը: Բարձրագոյն հրովարտակը դրած էր այն  
տեղ կերպասեայ թանգազին բարձի վերայ: Չորս Հայ աւագ իշխաններ  
եւ երկու նշանաւոր քաղաքացիք վերցրին հրովարտակը եւ փառաւոր  
հանդիսակատարութիւնով յառաջ գնացին դէպի Վանքի մայր եկեղեցին:  
Խօսեան բաղմութիւնը լցուած մերձակայ փողոցները, ուղեկցում էր հան-  
դիսին: Բտիչչելը ամբողջ զինուորական եւ քաղաքական ծառայողներ  
հետ անբաժան ընթանում էր: Բարձրագոյն հրովարտակն երեւելուն պէս՝  
զօրքը զինուորական պատիւ տուեց: Մինաս Արքեպիսկոպոսը՝ բոլոր  
հոգեւորականութեան հետ ղգեստաւորուած՝ վանքի դրանը խաչով, խաչ-  
վառով գիմաւորեց հանդիսին: Նա իւր ձեռքն առաւ բարձրագոյն հրո-  
վարտակն եւ գլխին դրած՝ շարականներով, զանգակահարութիւնով եւ  
ժողովրդի գոհացողական փառարանութիւններով յառաջ շարժուեց դէպի  
եկեղեցին: Տաճարի դրանը տեղւոյն հոգեւոր պետը Աստուածատուր  
Արքեպիսկոպոսը իւր բարձր կոչման համապատշաճ ամենայն փառքով  
զարգարուած՝ սպասում էր թափօրին: Ընդունելով բարձրագոյն հրովար-  
տակը նա ինքն եւս գրեց գլխին եւ մտաւ եկեղեցին: Սեղանի առաջին  
արհին ծունկ չոքեց, հրովարտակը բազմացրեց նորա համար պատրաստած  
տեղը, ժամը օրհնեց եւ գոհացողական մաղթանքն սկսաւ:

« Այն ջերմ փառարանութիւնները եւ սրտաբուլի արտասուքները,  
որ արտայայտուում էին ամեն դասակարգի հայ մարդի երեսի վերայ,  
գրում է Բտիչչելը, նոցա խորին եւ անկեղծ զգացմանց եւ առ կայսրն  
ունեցած ջերմ գոհունակութեանց թարգմանն էին: »

Երեկոյին Հայերը մի չքեղ երեկոյթ տուին եւ հէնց այնտեղ նուի-  
րեցին 4000 մանէթ չքաւորներին բաժանելու համար, որպէս զի եւ նոքա  
մասնակից լինին հասարակաց ուրախութեանը: Հրովարտակը բերող  
սուբհանդակը 1000 մանէթ պարգեւ ստացաւ հայ հասարակութիւնից:

Ռուսաց կայսեր մի բարեհաճ խօսքի համար Հայ ազգի զգացած այս  
արտալիբ ուրախութիւնը պարզ ապացոյց է, թէ ի՞նչպէս մեծ ջանքով  
ճգնում էին նոքա ազատուել օտարազգի անհաւատների իշխանութեան  
տակից, թէ ո՞ր աստիճան ձգտումն ունէին նոքա դէպի հիւսիսային հզօր  
պետութիւնը եւ թէ ո՞րչափ բնական եւ օրինաւոր էր ուրեմն Ռուսաց  
հետամտութիւնը դէպի Անդրկովկասի քրիստոնեայ երկրները:

Տարիներ անցան, բայց դեռ չէր հասել անհաւատների ձեռքից Հայ  
ազգի, եւ նորա սրբութիւնների ազատութեան օրը, դեռ չէր զարկել  
հալածանքներից լոյս հաւատի փրկութեան ժամը:

Բայց եւ այնպէս բուն Հայաստանումը ազատութիւն ձեռք բերելու

գաղափարը մեռած չէր . այն էլ՝ Ռուսաց օգնութեան շնորհիւ :

Մի ժամանակ Հայոց սուրբ հայրերից մէկը նախագուշակել էր թէ Հայաստանը ազատուելու է հիւսիսային ազգի ձեռքով : Հայերը հոգւոյ ամենայն զօրութիւնով հաւատում էին այս աւանդութեանը, նոցա սրտի խորքում այնպէս արմատ էր ձգել այդ խօսքը . որ հայրը մեռնելու ժամանակ կատարում էր իւր զաւակներին զանգակահարութիւնով տօնել այն օրը , երբ կը ծագի Հայաստանի ազատութեան արշալոյսը , որպէս զի ինքն էլ գերեզմանի մէջ՝ այս անցաւոր կեանքի սահմանից դուրս՝ լսելով այս աւետիքը , խնդայ հայրենեաց փրկութեան համար : Այս բերկւրալից գէպքին Հայերը առանձին իմն եռանդով եւ յուսով էին սպասում :  
Եւ ահա 1827 թուի Պարսկական պատերազմի սկսած ժամանակ Պարսից աշխարհի Հայերը գրկաբաց ուրախութեամբ դիմաւորում էին Ռուսներին , ինչպէս իւրեանց ազատարարներին :

Այդ ժամանակուան ազգային ձգտումների թարգմանը եւ ղեկավարը հանդիսանում է Ներսէս Արքեպիսկոպոսը, մի վսեմ եռանդով լցուած անձնաւորութիւն , որ կարծես իւր ամբողջ կեանքովը նախապատրաստուած էր ուղղակի այդ հերոսական քաջագործութեանց համար :

Ներսէս Աշտարակ գիւղի մի քահանայի որդի էր : Ի մանկութենէ նա իրեն նուիրել էր միայնակեցութեան : Ամենայն ուրեք անբաժան գտնուելով իւր հովանաւոր Դանիէլ Արքեպիսկոպոսից, նա ձեռք բերեց այն բազմափորձութիւնը , այն մարդաճանաչութիւնը , կեանքի եւ հանգամանքների մէջ այն հմտութիւնը , որոնք վերջումն այնպէս պէտք եղան իրեն :

Վարդապետ ժամանակը 1799 թուին նա Դանիէլի հետ դնաց Կ. Պօլիս , նա ծանօթացաւ այն տեղ տաճկական մայրաքաղաքի նշանաւոր Հայերի հետ , ակնաստեալ եղաւ Յովհաննէս պատրիարքի անկմանն եւ աքսորուելունն եւ նորա փոխարէն Դանիէլի պատրիարքանալուն, վերջը՝ տասն ամսից յետոյ՝ տեսնելով Դանիէլի գահընկէցութիւնը , ինքն եւս նորա հետ աքսորուեց Թոխաթ :

Հէնց այս ժամանակ մեռաւ Էջմիածնի կաթողիկոս Յովսէփ երկայնաբազուկ Արղուժեանը եւ Դանիէլը հռչայուեցաւ նորա փոխարէն Հայոց կաթողիկոս :

Դանիէլն եւ Ներսէսը աճապարեցին Էջմիածին , բայց դեռ ճանապարհին — Բայազիդումը իմացան, որ Դաւիթն Էջմիածնումն իրեն կաթողիկոս է հրատարակել եւ Սուլթանից եւ Շահից հաստատուել, որպէս թէ հանգուցեալ կաթողիկոսի կտակին համաձայն, որ ի հարկէ, վերջումն երևեցաւ . որ կեղծ էր :

Դանիէլը մնաց Բայազիդից ոչ հեռու Իւչքիլիսայի փոքրիկ վանքումը , եւ ահա այս բոպէից սկսուում է Հայոց եկեղեցական պատմու-

թէ եւ սկզբումը պաշտպանեց Դաւթի իրաւունքը , բայց վերջը ստուգելով հանդուդեալ կաթուղիկոսի կտակի կեղծումն , անցաւ Դանիէլի կողմը : Ինչպէս ասում են , Նրեւանի սարդարը կաշառուած լինելով տասն երկու քսակ ոսկով , միջամտեց այս չփոթին եւ Դանիէլը Ներսիսի հետ շղթայակապ բերուեց էջմիածին եւ բանտարկուեցաւ :

Ներսէսին յաջողեցաւ փախչել Վրաստան ճիշտ այն ժամանակն , երբ Դանիէլին աշտոբեցին Մարաղայ : Շատ չանցաւ , Պարսից կառավարութիւնը Ռուսաստանի սպառնալեռքն ինքը գահընկեց արեց Դաւթին եւ կաթուղիկոսութիւնն անցաւ Դանիէլի ձեռքը : Ներսէսն այդ միջոցումն եկաւ էջմիածին եւ եպիսկոպոս ձեռնադրուեց :

Առաւել մեծ ազդեցութիւն ձեռք բերեց Ներսէսը Դանիէլի յաջորդ Նփրեմ կաթուղիկոսի օրովը : Բայց որովհետեւ Պարսից տէրութիւնը հալածուէր Ներսիսին , նա 1814 թուին թողեց էջմիածինն եւ նշանակուեցաւ Վրաստանի առաջնորդ , ուր եւ գրաւեց Սրմուլովի համակրութիւնը : Բայց քաղաքական հանգամանքներն այնպէս խճճուեցան , որ ինքը կաթուղիկոսը ստիպուեցաւ փախչել էջմիածնից եւ ապաստանել Վրաստանումը՝ Ներսիսի վիճակումը : Նոքա միմեանց հանդիպեցան Շուշումը :

Մերունի Նփրեմ կաթուղիկոսը ինքը նստեց մի վանքում եւ աթոռի բարձրագոյն վարչութիւնը նորից յանձնեց Ներսիսին :

Արքայս միբզան գիտելով՝ որ Ներսէսը մեծ ազդեցութիւն ունի բոլոր Հայերի վերայ , շատ անհանգիստ էր , որ նա իւր իշխանութիւնից դուրս է ապրում , ուստի ամենայն զօրութեամբ , փողով եւ պատիւներով աշխատում էր համոզել նորան կաթուղիկոսի հետ միասին գալ էջմիածին : Էջմիածնի միաբանները Արքայս միբզայի ճնշման ներքոյ լինելով , նորա հրապուրանօքը պահանջում էին Նփրեմ կաթուղիկոսի վերադարձը : Սակայն Ներսէսը կամելով ազատ լինիլ պարսկական իշխանութիւնից , մնաց Վրաստանումը եւ կաթուղիկոսին էլ համոզեց մնալ :

Պէտք է ասել , որ Ներսէսը յոյս ունէր մօտիկ ապագայում իւր հայրենիքի ազատութիւնը անձամբ տեսնելու եւ ինքն էլ նոյն ուղղութեամբ էր գործում : Ներսէսը ջերմ հայրենասէր էր . նա իւր հօրիցն էր դաստիարակուել այդ ուղղութեամբ : Վերջերում նա արտասուքն աչքերին պատմում էր , թէ իւր հանգուցեալ հօր վերջին կտակն այն է եղել , որ մինչեւ Հայ ազգի սրտագին ցանկութիւնը չը կատարուի եւ սուրբ կրօնը մահաժողովանութեան լծից չազատուի , նա իւր գերեզմանին այցելութիւն չը գայ : Ասում էր Ներսէսը , թէ ինքն ապրում է այն յուսով , որ Ռուսաց զօրապետի հետ միասին այցելէ մի օր իւր հօր գերեզմանին :

Նու ահա , երբ 1827 թուին Ռուսաց յառաջապահ զօրքը Բենկենզօրֆի հրամանատարութեան ներքոյ ոտք դրեց Նրեւանի խանութիւնը , նոցա մէջ էր եւ Ներսէսը :

Քրիստոնէից ազատութեան համար եկած զօրքի մէջ Ներսիսի ներ-

կայութիւնը քաջալերում էր Հայոց ազգաբնակութիւնը :

Պատերազմի ամբողջ շարունակութեան ժամանակ Ներսէս Էջմիածնում նստած, սրտատրոփ հետեւում էր պատերազմական ընթացքին, նա ականատես էր Արբաս միրզայի արշաւանքներին որ մեծ վտանգ էր սպառնում Էջմիածնին, ներկայ էր Աշտարակի կողումը, տեսաւ Թաւրիղի եւ Նրեւանի անկումը եւ խաղաղութեան դաշնադրութիւնը :

Այն րոպէին, երբ նա աներկբայ կատարուած էր համարում իւր հայրենիքի ազատութեան գործը, նա պարտք համարեց կատարել իւր հօր կտակը : Աշտարակ անշուք գիւղից կէս ասպարիզաչափ հեռու գտնուում էր Շահաղիգեանի կամսարականների պոանձնացած սեպհական գերեզմանատունը<sup>(\*)</sup> : Այդ տեղ բերեց Ներսէսը գեներալ Կրասովսկուն եւ ծնկաչոք արտասուքն աչքերին խոնարհեցաւ հօր գերեզմանի առաջ, որին երկար տարիներ չէր վստահանում մօտենալ :

Երբ Ռուսաց զօրքը Թաւրէզն առաւ, անմիջապէս Ադիրբէյջանի Հայերի կողմից պատգամաւորութիւններ յաճախեցին Պասկեիչի մօտ եւ խնդրեցին գաղթեցնել իրենց Ռուսաց սահմանը :

Ռուսաց կառավարութեան ցանկութիւնն էլ այս էր. այս առաջարկութիւնը բոլորովին համաձայն էր իւր հայեցակէտին : Գլխաւոր հրամանատարը քաջալերեց, փայփայեց նոցա եւ արձակեց գնալ ու գաղթելու պատրաստութիւն տեսնել :

Սակայն անագորոյն ձմեռը եւ գուցէ այն յոյսը, թէ Ադիրբէյջանն էլ կըմնայ Ռուսաց ձեռքի տակ, արգելք եղան քրիստոնեաներին հեռաւոր ճանապարհորդութեան պատրաստելու մինչեւ մարտ ամիսը : Այնուհետեւ մի քանի արգելքներ եւս յառաջ եկան. մի կողմից Հայերը զղջացին իւրեանց տուած խոստումից, միւս կողմից Պարսիկներն սկսեցին համողել նրանց յետ մնալ եւլն : Իսկ Ռուսաց կառավարութիւնը վճռեց ամենատեսակ միջոյններ գործ դնել Հայերի բարոյական ոգեւորութիւնը վառ եւ զօրացած պահպանելու :

Այս նպատակի համար Ներսէսն ուղարկեց Պարսից զաւառները Ստեփաննոս Արքեպիսկոպոսին եւ Նիկողայոս վարդապետին, իսկ Պասկեիչը կոչելով Պեսերբուրգից գնդապետ Լաղարեանին յանձնեց նորան գնալ եւ գաղթականութեան գործը յառաջ տանել եւ ղեկավարել :

Գնդապետ Լաղարեանն այն նշանաւոր տոհմի զաւակն էր, որոնք յայտնի են Մոսկուայում արեւելեան լեզուաց ճեմարանի հիմնարկութեամբը եւ որոնք ի վաղուց անտի բնակուելով Ռուսաստանում՝ կառուցել են մայրաքաղաքների հայ եկեղեցիքը եւ շարունակ անխնայ օգնութիւն են հասցրել իւրեանց հայրենակիցներին :

(\*) *Ներսիսի հայրը թաղուած է ոչ Շահաղիգեանների գերեզմանա-*

Այս տան հարստութեան պատմութիւնը ամուր կապուած է Ռուսաց կայսերական թագը զարդարող մի թանկագին գոհարի հետ: Այդ անդամանգը, որ Շահ-Նադիրին էր պատկանում, բերել է Լազարեան տոհմի անդամներին մէկը:

Պարսկական լծից բուն Հայաստանի ազատութիւնը չէր կարող արձագանք չը տալ եւ Պարսից աշխարհում բնակուած Հայերի սրտերում, չէր կարող չը զարթնացնել նոցա մէջ հայրենասիրական զգացումներ եւ ազատութեան ձգտումն: Այդպէս էլ եղաւ:

Շահի սպանուելուց յետոյ՝ այդ թանկագին քարը ձեռքէ ձեռք անցնելով՝ ընկաւ վերջը Պետերբուրգում բնակուող Շաֆրազ անուանով մի Հայի ձեռք: Լազարեանը յանձն կառնու այդ գոհարը կոմս Օրլովի համար գնել տալու: Գոհարը գնուեցաւ 400000 մանէթի:

Օրլովը՝ զատկի առաջին օրը՝ կարմիր ձուի ձեւով շինուած մի տփի մէջ այդ գոհարը նուիրեց Եկատարինէ Կայսրուհւոյն:

Այն անդամագին իւր մեծութեամբը, փայլովը, տաշուածքովը եւ ջրովը մի հազուագիւտ բան է. ճանաչողները գնահատում են մի քանի միլիօն:

Եկատարինէն հրամայեց զարդարել նորանով կայսերական գայիստներ:

Եւ ահա այս տան ներկայացուցիչներից մէկն այժմ եկաւ Հայաստան՝ իւր ազդեցութիւնովը Հայոց դաղթականութեան գործը հեշտացնելու:

Լազարեանն անձամբ շրջեցաւ Մարաղայ, Սալմաստ եւ Ուրմի, իսկ մի քանի Ռուս սպաներ անցկացան մինչեւ Քրգստանի խորքերը, ուր կային նոյնպէս Հայեր, թէ եւ սակաւաթիւ: Եւ դաղթականութեան գործը սկզբումը շատ յաջող էր գնում:

Ճանապարհից Լազարեանը գրում է Պասկեւիչին, որ Հայերը յայտնում են իւրեանց սրտալիր ցանկութիւնը յաւիտեանս Ռուսաց հպատակութեան ներքոյ մնալու եւ թէպէտ մարդուս համար դժուար է բաժանուել իւր ծննդավայրից, բայց նոքա պատրաստ են թողուլ իւրեանց տներն եւ գնալ ուր որ կը հրամայեն:

« Ձեզ է վիճակուած վայելելու Հայ ազգի վերականգման փառքը, գրում է Լազարեանը Պասկեւիչին, այն ազգի՝ որ տաժելով իւր մէջ մի հաւատ դէպի մեր տունը, երաշխաւորել է ինձ յայտնել իւր զգացումները Ձեր բարձր գերագանցութեանը: »

Եւ արդարեւ, դեռ հաղիւ թէ իմացուել էր, որ Ռուսները կարճ միջոցից յետոյ հեռանալու են Ադիրբեյջանից, Հայերը պատրաստուեցան ճանապարհ ընկնելու:

Թէ ինքը Լազարեանը եւ թէ շատերը սկզբումը կարծում էին, թէ դաղթականութեան գործը մեծ դժուարութիւններ է հանդիպելու, մա-

նաւանդ սր իրենք Հայերն էին խնդրում , բայց պորձնականապէս մեծ արգելքներ յառաջ եկան :

Երբ գաղթա՛յանները վերջնականապէս հրաժեշտ պէտք է տային իւրեանց աներին , իւրեանց նախնիքների շիրիմներին , այն աշխատասէր նախնիքներն՝ որոնք դառն յրախնքով թողել էին իւրեանց համար գեղեցիկ պտղատու դաշտեր , երբ խալառ պէտք է բարձի թողի անէին իւրեանց երկար սարիներով շինած գործարաններն եւ նոցա եկամուտները , երբ ներկայի հաստատ հացի կտորը պէտք է փոխէին մի անյայտ եւ մութն ապագայի հետ :

Անվտանգութեան օրինակ յոյց տուողները առաջինը նեստորականներն եղան : Մինչ նոքա կարծում էին , թէ ամբողջ Աղբրբէյջանը միալու է Ռուսներին , նոքա սողում էին Պասկեւիչի ոտքի տակին , բայց երբ անձնագրահաւթիւն անելու մամը հասաւ , նոքա այնպիսի պահանջներ յայտնեցին , որ մերժելը խոհեմութիւն էր :

Եւ նեստորականները որոնք , ինչպէս Հաղարեանն ասում էր , ձեռքերը Ռուսներին էին մեկնել , իսկ սրտով Պարսիկներին էին անձնատուր , մերժումն ստացան :

Բայց եւ այնպէս նեստորականների օրինակին հետեւեցան եւ բնիկ Հայերը :

Արդարութիւնը պահանջում է ասել , որ գտնուեցան քանի մի լեպիսկոպոսներ , զոր օրինակ Սալմասաի Խարայէլ եպիսկոպոսը , որոնք ի հաճոյս Պարսիկների մոտանալով իւրեանց քրիստոնէական պարտականութիւնը՝ գաղանի խոտովութիւններով եւ յայտնի սպառնալիքներով , ինչպէս վկայում է Ներսէսը , արգելք էին լինում Հայերի գաղթականութեանը :

Պէտք է խոստովանել , որ Ռուսների կողմից գաղթականներին առաջարկած պայմանները , արդարեւ , ծանր էին եւ չէին կարող կասկած եւ երկմտութիւն չը յարուցանել :

Հայոց ունեցած ամբողջ կարողութիւնն էին իւրեանց անչարժ կալուածքները , տները , պաղատու այգիք եւ արգաւանդ դաշտերն , եւ նոքա այս ամենը երեսի վերայ ձգելու եւ հեռանալու էին , բնական էր ուրեմն , որ նոքա պահանջէին Ռուսաստանից , որ իւրեանց բարձի թողի արածների արժողութեան գէթ երբորդ մասն վերադարձնէին իւրեանց :

Թէպէտ եւ թուրքմանչայի պահապրութիւնը Հայերին իրաւունք էր սալիս ծախել իւրեանց սեպհականութիւնները մահմետականներին , բայց պործով այդ անկատար մնաց , ըստ որում Պարսից կառավարութիւնը խստիւ արգելել էր իւր հպատակներին ոչինչ առեւտրական յարաբերութիւն չունենալ Հայերի հետ , որպէս զի այդպիսով վերջիններիս հարկադրէր կամ մնալ իւրեանց հպատակութեան ներքոյ եւ կամ զրկուել կաւուրու կատարած ռեւոլուցիոն :

Նոյն ինքն Լազարեանը ճշդապէս կատարելով Պասկեւելի հրամանը, չէր աշխատում այնու ամենայնիւ շողոքորթել Հայերին անիրազործելի յոյսերով : Նա ուղիղ ասում էր նոցա , թէ ինչ որ իւրեանք Պարսկաստանումը թողնում են, չեն կարող գտնել Երասխի միւս ափին . թէ ամենամեծ օգնութիւնը, որ կարելի է տալ մէն մի գերդաստանի հինգ արծաթ մանէթից աւելի չի լինիլ, բայց թէ նոքա կարող են վստահ լինիլ, որ թէ իրենք եւ թէ իւրեանց սերունդը անդորրութիւն կը վայելեն իւրեանց հաւատակից պետութեան հովանաւորութեան ներքոյ :

Եւ արդարեւ , իբրեւ սկզբնական օգնութիւն , դաղթականներին որոշուեցաւ միմիայն 50000 մանէթ եւ Հայերի միակ յոյսն այն խոստումն էր , որով նոքա մի քանի տարի պէտք է ազատ լինէին հարկերից եւ տուրքերից :

Բայց զրկուելով տուն ու տեղից տարուան այն ժամանակը , երբ տնային ամեն պաշարներն սկսում են սպառուել , եւ ստանալով գերդաստանագլուխ 6-7 մանէթ միայն , Հայերը պէտք եղած հացն էլ չը կարողացան գնել . իսկ նոքա , որոնք փոքր իշատէ պաշար ունէին իւրեանց համար , նոքա եւս վերցնելու հնարաւորութիւն չունէին , թէ ճանապարհն էր հեռի եւ թէ անասուն գնել անհնար էր . մի ամենահասարակ էջը արժում էր 12-15 մանէթ արծաթ :

Պարսկական կառավարութիւնը կորցնելով ցաւօք սրտի բազմաթիւ աշխատասէր հպատակներ , իւր կողմից ամենատեսակ դժուարութիւններ էր ստեղծում Լազարեանի գործը խանգարելու համար : Պարսկական գործակալներն ամենուրեք սփռուած՝ Հայերին հասկացնում էին , թէ Ռուսաստան մտնելուն պէս իւրեանց պէտք է ստրուկներ անեն եւ զինուոր առնեն , իսկ Պարսկաստանն , ընդհակառակը , ազատ կը կացուցանէ իրենց հարկերից եւ մեծամեծ արտօնութիւններ կը շնորհէ :

Իւրեանց ասածներին իբրև ապացոյց , նոքա այժմէն իսկ աւելի փող էին առաջարկում Հայերին , քան թէ որքան Լազարեանն էր տալիս : Բայց երբ եւ այս չազդեց , Պարսից կառավարութիւնը հետեւեալ միջոցը ձեռք առաւ : Նոքա հրատարակեցին , թէ Ռուսները բռնութիւնով են Հայերին դաղթեցնում եւ զորանով խախտում Թուրքմանչայի դաշնագրութիւնը :

Այս մտքով Աբբաս Միրզան մի յանդիմանական թուղթ գրեց Լազարեանին , թէ ինքը բռնի կերպիւ է ուզում Հայերին տանել եւ խընդրեց որ նա իրեն յարգող եւ համակրող ժողովրդի մտքերի վերայ ի չարն չը դործ գնէ իւր ազդեցութիւնը . « Եթէ խղճիւ դատենք , զրում է իւր նամակի մէջ Աբբաս Միրզան , ի՞նչպէս է կարելի , որ քանի մի հազար ընտանիք ինքնայոժար օրտիւ երեսի վերայ վայր ձգի իւր հազարամուտ հայրենիքը , իւր կալուածքը , այգիները զաշտ ու տափը , «բպէս զՎ վերջը գնա ; եւ մնայ առանց մի կտոր տեղի եւ ընչի » :

Հայոց շահերի պաշտպանութեան պատրուակաւ Թարսիզից ուղարկուեցաւ անդամ անգլիական դիսպանութեան անդամ կապիտան Վիլլօկը :

Լազարեանն ստիպեց նորան գնալ իւր հետ միասին գաղթականների կայարանները եւ առաջարկեց նորան անձամբ հարց ու փորձ անել : Եւ երբ Հայերը պատասխանեցին , թէ « ինքեանք գերադաս են համարում ուտել Ռուսի խոտը . քան Պարսից հացը » , Լազարեանը պահանջեց Վիլլօկից գրաւոր վկայագիր սալ իրեն :

Գաղթականութեան ամենանշանաւոր արգելքներից մէկն էլ համարելու է մահմետականների ատելութիւնը . նոքա հայհոյանքներ էին թափում գաղթականների վրին եւ շատ տեղ քարահալած էին անում : Մինչեւ անգամ արիւնհեղութեան երկիւղ էլ կար , մանաւանդ որ Պարսից կառավարութիւնը ոչինչ ուշադրութիւն չէր դարձնում Թուրքերի տուած տանջանքների վերայ , յուսալով , որ այդպիսով , Հայերը կը վախենան եւ Պարսկաստանում կը մնան :

Մի առանձին թշնամութիւն էր նկատուում Քրդաստանում , որտեղից յաջողուեց մի քանի գերդաստան միայն գաղթեցնել , այն էլ՝ ամենամեծ գթուարութիւններով :

Այն տեղի Հայերի ցաք ու ցրիւ ընկած բնակարանները շինուած էին խորդ ու բուրդ եւ բարձրաբերձ սարերի մէջ , իսկ դուրսի շխարհի հետ կապուած էին անդնդախոր ձորերի նեղ շաւիղներով եւ օձապտոյտ անցքերով . իսկ նոցա շրջակայքը մահմետականաց գիւղեր էին , որոնք անուամբ միայն ստորագրեալ էին Պարսիկներին :

Արժան է զարմանալ այն սպաների անձնազուրկութեան վերայ , որոնք երկու երեք զազախների ուղեկցութիւնով մտնում էին այն գառապիղները , ուր իւրաքանչիւր ժայտ . իւրաքանչիւր դարեւանդ եւ խոր ձոր ամեն մի բոպէ մահ ու կապանք էր նոցա սպանում :

Կատաղի դազան կտրուած Գրդերն՝ օրով ցորեկով յարձակուում էին սակաւաթիւ հայ գաղթականների վերայ , յափշտակում , սպանում եւ կամ յետ էին մղում նոցա :

Լազարեանն ստիպուեցաւ օգնութիւն խնդրել գննարալ Պանկրատեւից , եւ միայն Ուրմիսից եկած զօրքն էր , որ կարող եղաւ ցրուել այն հրոսակների խմբերը :

Բայց , ի հարկէ՛ , այս ամենայն արգելքները չը կարողացան մի անգամ սկսած գործը խանդարել եւ հայ ժողովուրդը մաս մաս Ռուսաց զօրքի հետ միասին հեռացաւ Պարսկաստանից :

Ամենամեծ եւ առաջին բաժինը ճանապարհ ընկաւ 1828 թուի մարտի 16ին :

Արեւելեան ամենաչքեղ գարուն էր , ամենայն կողմից՝ Ազիբէյ-ջանի լեռների գագաթլայրներից յառաջ էին շարժուում զէպի Նրասիս գաղթականների բազմաթիւ կտրուաններ :

« Սրտաշարժ էր, պատմում է Գլինկան, սևսնել, թէ ինչպէս մայրերը սովորցնում էին իւրեանց մանուկներին արատասանել Հայոց առաջին թագաւոր Նիկողայոսի անունը, ինչպէս նոքա ներշնչում էին զաւակներին չը մոռանալ իւրեանց մեծ ապատարարին: »

Երեւելի նկարիչ Մօշկովը մի մեծ պատկեր է նկարել, ուր ներկայացնում է 40000 հայ գաղթականութիւնը գնդապետ Լ. Ե. Լազարեանի անմիջական ղեկավարութեան ներքոյ, Հետում երեւում են Մասիսը, Երասխը եւ Երեւանու ճանապարհի վերայ ընկած գիւղերը: Պատկերի աջակողմը ինքը Լազարեանը հրամաններ է տալիս հայ տանուտէրներին եւ աւագներին, նորան շրջապատել են իւր թիկնապահները, անգլիական ու պարսկական ներկայացուցիչները, իսկ յիսին գծի վերայ երեւում է գաղթականների ընդարձակ նստուածքը:

Սակայն եւ այնպէս, հէնց առաջին քայլափոխում նոր հայրենիքը շատ սիրով չընդունեց իւր գաղթական զաւակներին:

Այն ինչ աւելի քան 5000 դերդաստան գաղթականներ Երասխին մօտեցան, Լազարեանը Երեւանու նահանգական վարչութիւնից մի լուր ստացաւ, թէ ինքը հացի պակասութեան պատճառաւ նորեկներին կարելուր օգնութիւնը չի կարող հասցնել, ուստի եւ խնդրում էր Լազարեանից յետ պահել նրանց Երասխի պարսկական ափումը մինչեւ արտերը հնձելը:

Հայերը մնացին երկնքի տակ եւ մեծ նեղութիւն կրեցին: Ազատ հողեր չը կային, պէտք եղաւ գաղթականների մեծ մասն ուղարկել այն տեղից Ղարաբաղ:

Ահա այսպէս գլուխ եկաւ Հայոց գաղթականութիւնը, որ մեծ օգուտ տուեց Ռուսաստանին՝ Անդրկովկասում մի այսպիսի աշխատասէր եւ կարելի է ասել, միակ երկրագործ ժողովուրդ ձևաք բերելով:

Ընդհակառակն Ադիրբէյջանի մարդարնակութիւնը զգալի կերպիւ պայտսեց եւ Պարսկաստանը՝ նոյն իսկ պարսկական կառավարութեան հաշուով, աւելի քան 32 միլիօն մանէթ վճատ կրեց:

Ամբողջ գաղթականութեան վերայ, ինչպէս Լազարեանի հաշուետուութիւնից երեւում է, ծախսուեցաւ միայն 14000 հոլլանդական ոսկի (պաճախու) եւ 400 մանէթ արծաթ, իսկ այս աննշան գումարով գաղթեց 8249 դերդաստան, որ բոլորը միասին 40000 հոգուց աւելի է անում:

« Վստահանում եմ ասել, այսպէս է գրում Լազարեանը Պատկերիչին իւր յայտարարութեանց մէջ՝ տալով նորան իւր գործառնութեանց հաշիւը, թէ դուք լցնելով ձեր ձեռք բերած երկիրները այսպիսի մի վաճառաշահ եւ աշխատասէր ժողովրդով, տէրութեան համար հարստութեան մի մեծ աղբիւր բաց արիք, եւ որքան մեծ ծախս եւս արած լինէր գաղթականութեան վերայ կառավարութիւնը, ինքը աւելորդով շա-

Հինաւուրց եւ Մեծին Հայաստանի դաշտերի վերայ սփռուած ամայի անապատները տեղը , այժմ կը վերականգնեն աշխատասէր , վաճառաշահ եւ թագաւորին հաստատրիմ հպատակներով լի հարուստ գիւղեր եւ , գուցէ , քաղաքներ :

Վերջերս մը իրաւարանութեան նախարարութեան մէջ 1833 թուին մի խնդիր զարթնեցաւ հայկական նախկին դրօշները մասին եւ այդ խնդրը հետամտութիւնը յանձնուեցաւ գիտնական պրօֆեսօր Զրպետին :

Զրպետը Հայոց հին մասինագրները վկայութեան համաձայն պատասխանեց , թէ Կիւրոսին ժամանակակից Տիգրանի օրով Հայոց դրօշն էր եօթնգլխեան վիշապ . վերջերս մը՝ Արշակունեաց հարստութեան ժամանակ վիշապը փոխուեցաւ միադուլիս արծուի : Քրիստոնէութեան մուտ գործելովը հայ դրօշակները վերայ նկարուում էր փրկչական անձեռագործ պատկերը , յետոյ դաստառակի տեղ դրին դառն Աստուծոյ՝ խաչը ձեռքին : Վերջապէս Ռուսիաներէն դրօշն եղաւ առիւծ : Այս բոլոր զինանշաններին միասին առած , կամուսն Հայոց նահանգի համար մի ընդհանուր դրօշ կազմել : Բայց չը դիտեմ ինչպէս փոխուեցաւ բանը , որ դրօշի վերջնական նկարը հետեւեալն եղաւ : Կապոյտ տեղի վերայ՝ մի արծաթեայ վահանի մէջ տեղումը նկարուած է Մասեաց ձիւնապատ գագաթը , սպիտակ ամպերը նորան շրջապատել են , լեռան կասարին էլ Նոյեան ոսկեայ տապանն է դրուած :

Դրօշի ներքին մասը երկուսի է բաժանուած . աջ կողմում , կարմիր տեղի վերայ Հայոց նախկին թագաւորաց թագն է . թաղն ամբողջ ոսկեայ է , արծաթեայ աստղերով եւ մարգարիտներով զարդարուած , իսկ թագակապը եւ աստուոր՝ կապտագոյն են : Ձախ կողմում՝ կանաչ տեղի վերայ՝ էջմիածնի վանքն է ամբողջ արծաթեայ , իսկ կաթուղիկէներն իւրեանց խաչերով՝ ոսկեայ են :

Դրօշի վերին մասումը՝ ոսկի տեղի վերայ՝ նկարուած է Ռուսաց երկգլխեան արծիւը , նա գրկած , բռնած ունի իւր ճանգերի մէջ վերոյնիշեալ վահանը : Իսկ այս ամենի գլխին դրուած է կայսերական թագը :

Վերջերս մը , երբ Հայոց նահանգը միացաւ նոր հաստատուած Երեւանեան կոչուած նահանգի հետ , դրօշն էլ ուրիշ կերպ փոխուեցաւ : Մի կապտագոյն վահանի վերայ նկարուած է մի արծաթեայ ժայռ , վահանի գլուխը պսակում է մի սուրբական ոսկի խաչ , իսկ վահանի վերայ դրուած է կայսերական թագը :

Բայց Ռուսաց կայսերական բռն դրօշի վերայ մնացել է մի առիւծ , որպէս Ռուսիաներէն վերջին հարստութեան դրօշ :

Աւելորդ չի լինիլ ասելը , թէ երեսնական թուականներին Հայերը մի ծրագիր կազմեցին՝ տեղական հայ գօրք կազմելու նպատակաւ . որ սուրբական եւ բուն սուրբական սպաների հրամանատարութեան ներքոյ

պէտք է պահպանէին սահմանները եւ կատարէին ներքին ծառայութիւնները :

Նոր ծրագրի մէջ ի թիւս այլոց ասուած է եւ. այն, թէ « Հայ ազգը երջանիկ կը համարի իրեն, եթէ իւր հարուստ եւ առաջաւոր տների զաւակներին կազմուէր մի զօրագունդ (դրուժինա կամ էսկադրոն), եւ զբանուէր Ս. Պետերբուրգում նոյն իսկ կայսեր անձնաւորութեան մօտ իւրեւթիկնապահներ : Որչափ արգելքները սակաւ լինին, որքան ծառայութիւնը հեշտ՝ այնչափ էլ ցանկացողներ թիւը կաւելանայ : »

Երագիրն առաջարկում էր, որ մի առանձին զինուորական դպրոց (կորպուս) հաստատուի հայ սպաներ պատրաստելու՝ առանց սէրութեան գտնաբարների օգնութեան, թէ այդ դպրոցում եւ թէ ուրիշ նմանապիսի հաստատութեանց մէջ ոռոսաց լեզուի ուսումը պարտադիր լինի : Դրժբադաբար այն ծրագրի վախճանը մեզ անյայտ է :

Հայաստանի ազատութեան երկու նշանաւոր դուրծիչները եղան եւ նորա խաղաղ կենսական ասպարիզի մէջ առաջին ղեկավարները : Սոքա էին Կրասովսկին եւ Ներսէսը :

Երբ Երեւանը նուաճեցաւ եւ ամբողջ նահանգը Նախիջևանի զաւառի հետ միասին միացաւ Ռուսաստանին, Երեւանի սարդարնիւրի հոյակապ պալատումը բնակուեցաւ գեներալ Լէյտինանտ Կրասովսկին՝ Հայաստանի առաջին զինուորական նահանգապետը :

Մենք չենք ուզում ասել թէ, հալիւ նոր տիրապետած երկրումը նա իւր խաղաղ գործունէութեան ժամանակ մեծամեծ հրաշքերի գործեց, այսքանն էլ բաւական է վկայել, որ մօտ անցեալի մէջ կրած նեղութիւնից յետոյ Հայերը օրհնում եւ փառաբանում էին Կրասովսկու անունը իւր ստորագրեալներից ոչ սակաւ, բաւական է ասել, որ Կրասովսկին ժողովրդի հետ մարդասիրաբար վարուելու պատճառաւ մեղադրուեցաւ իբրեւ Հայերի շահերին պաշտպան եւ կուսակից :

Ներսէս Արքեպիսկոպոսը, որին կարելի է կոչել Հայ ազգի իսկական պետն եւ գլուխը, կարողացաւ կարճ միջոցում կատարած իւր գործունէութիւնները անմոռանալի կացուցանել :

Իբրեւ ապացոյց իւր շնորհակալեաց հաւաստեացի առ Աստուած եւ առ կայսրը՝ Հայաստանի ազատութեան գործը յաջող վախճան ստանալու համար, Ներսէս ուխտել էր իւր հօր գերեզմանի վերայ՝ որ Սարգարաբադումը իւր հաշուով կը շինէ մի ոռոսական եկեղեցի Նիկողայոս սքանչելագործի անունով :

Այս բարի գործին մասնակցեցին Սարգարաբադում գտնուած բոլոր քրիստոնեայ ազդաբնակութիւնները եւ տաճարը հիմնուեցաւ Կրասովսկու ներկայութեամբ 1ին յունվարի 1828 թուի :

Սորանից յառաջ մի այսպիսի հանդէս էլ Երեւանումը կատարուեցաւ : Ռուսները Երեւան ուր զրաժ ժամանակը այն տեղ կար միայն մի քրիստոնէական տաճար որ Հայերին էր պատկանում : Այս մի աղքատիկ հին եկեղեցի էր Զօրավար անունով , որ ըստ աւանդութեան իւր ստորերկրեայ խորանում ամփոփած ունի Սաւուղին մկրտող Անանիա առաքելոյ մասունքը :

Պարսկելիչը ցանկացաւ մշանջենաւորել պարսկական անառիկ ամրոցի առման յիշատակը մի նոր տաճար հիմնելով :

Եւ հաս . նորա միջնորդութեան համաձայն , 1582 թուին տաճիկներէջ հիմնած Երեւանի գլխաւոր մեջիցը ոսկէ լուսնով զարդարուած , փոխուեցաւ Ռուսաց եկեղեցի յանուն հովանաւոր սուրբ Աստուածածնի , (պսկրով) ի յիշատակ Երեւանի բերդի առման , որ կատարուել էր նոյն օրը :

Ներսիսի աշխատութիւնովը կայսեր անուանակոչութեան օրը տաճարն արդէն պատրաստ էր :

Այդ օրուան համար Նեվայի ամուսնից ուղարկուած էր Զանգուի ամբը սրբազան սպասներ , խաչկալ , թանգազին անօթներ եւ սեղանի ու սկէնոյ սփռոցներ , որոնք կարել էին իւրեանց իսկական ձեռքով եւ նուիրել կրկու սգոստափառ կայսրուհիքը՝ Մարիա Ֆեօդորովնան եւ Ալէքսանդրա Ֆեօդորովնան :

Տաճարի ռումը կատարուեցաւ 1827 թուի դեկտեմբերի վեցին : Հէնց այդ օրը Հայոց բոլոր եկեղեցիներումը եւ մահմետական մեջիղնեւրումը գահացողական մաղթանք էին կատարուում Երեւանի նոր հրամանատարի՝ այն է Ռուսաց թագաւորի համար :

Բոլոր ժողովուրդը մեծ եռանդով եւ սիրով ընդունեց այս դէպքը . ոչ միայն Հայերը , այլ նոյն իսկ Պարսիկները ժողովեցին իւրեանց միջից մի նշանաւոր գումար 3000 մանէթից աւելի , Երեւանու նահանգում գտնուած զօրքին բաժանելու համար :

Բայց շատ շուտով , համարեա գործի սկզբումը , ինչպէս կրասովսկու նոյնպէս եւ Ներսիսի գործունէութիւնները սկսեցին դադար առնել՝ Պատկեւիչի հետ ունեցած թիւրիմացութիւնների պատճառաւ :

Պատկեւիչը դժգոհ էր կրասովսկուց դեռ այն օրից երբ նա սպայակոյտի (շաք) կառավարիչ էր , նա չը ներեց կրասովսկուն Աշտարակու կոտորուածքը . Պատկեւիչի թշնամութիւնը այն աստիճանի էր մեծացել դէպի կրասովսկին , որ նա ոչ միայն ժխտում էր վերջինիս զինուորական եւ կառավարչական ընդունակութիւնները , այլ եւ բարդեց նորա վերայ բազմապատիկ մուղադրանքներ նոր տիրապետած երկրի վերաբերմամբ :

Պատկեւիչը զանգասում էր , թէ Երեւանու նահանգի եկամուտը քանձարանը չի մտնում , այն ինչ Ադիրբեյջանը , աւելի վատ պայման .

ների տակ, հարկ է վճարում, թէ Երեւանու հահանգի ալքունի կալուածքի նկարագրութիւնը դեռ չի արուած եւ Երեւանի սարդարի պարտքերը չեն ցուցակագրուած եւ որոշուած, թէ երկրի տեղական մուտքերը ոչ թէ ի գործ են դրուած զօրքի պիտոյքը հոգայու վերայ, այլ տրուած են Կրասովսկու կողմից ժողովրդին ցանկու համար, մինչդեռ զօրքի պաշարը մեծ դժուարութեամբ է բերուում Վրաստանից, եւ ըն :

Պասկեւիչը մեղադրում էր Կրասովսկուն, որ նա Ներսիսին անսահման իրաւունք է տուել, որով նա մեծ ազդեցութիւն է գործում ամեն բանում եւ Հայերին վնասակար կերպիւ պաշտպանում է, այն ինչ ազգաբնակութեանց երեք քառորդ մասը մահմեականներն են կաղմում :

« Ես մինչեւ ցայսօր պատերազմական գործում Կրասովսկու հետ չէի ծառայած, գրում է Պասկեւիչը Դիրիչին, այդ պատճառաւ նորան համարելով մի ընդունակ մարդ, խնդրեցի նորան նշանակել շաքի կառավարիչ : Ձեզ քաջ յայտնի է, թէ նորա ծառայութիւնը այդ կոչման մէջ որքան օգտակար եղաւ : Ես կարծում էի նոյնպէս, թէ նա կարող է մի առանձին բանակի հրամանատար լինիլ . այդ էլ ձեզ յայտնի է, թէ նորա նշանակութիւնը ինչ հետեւանք ունեցաւ : Վերջապէս նա կառավարիչ նշանակուեցաւ նոր տիրապետած երկրին, որի ապագայ բոլոր կազմակերպութեան իրազորութեամբ կախուած էր նորանից, թէ նա առաջին անգամ գործին ինչ տեսակ ընթացք պէտք է տայ . շնորհ արէք ուրեմն տեսնել, կատարե՞ց արդեօք Կրասովսկին իւր պարտականութիւնն այդ կոչման մէջ . եւ ըն . » . . « Ես կարո՞ղ եմ ուրեմն մի այդպիսի օգնական ցանկանալ ինձ համար . . . Ես արդեօք կայսեր առաջին պատասխանատու չե՞մ գտնուիլ — հարց է առաջարկում վերջումը Պասկեւիչը — ամենից վերջը գալիս է այն եզրակացութեանը, որ Կրասովսկին պիտանի չի կարող լինիլ : »

Դիրիչին քաջ յայտնի էր, թէ Կրասովսկին ընչո՞ւ համար է շտաբի կառավարչութիւնը թողել, ուստի եւ, ինչպէս երևում էր, աշխատում էր մեղմացնել Պասկեւիչի խիստ հայեացքները :

Թէպէտ եւ, ի հաճոյս Պասկեւիչի, Կրասովսկին յետ կոչուեց կովկասից եւ ընդհանուր զօրաբանակի մէջ հաշուեցաւ (գուշխարին պօ արմից) բայց եւ այնպէս պարսկական պատերազմի վերջաւորութեան համար սուրբ Աննայի Ա. աստիճանի ալմասեայ շքանշան եւ միանու ապ 100000 մանէթ դրամական վարձատրութիւն ստացաւ թագաւորից :

1828 թուի ապրիլի 28ին Կրասովսկին դուրս գնաց Երեւանից դէպի Ռուսաստան : Այնպիսի վառքով ճանապարհ դրին նորան, որ համեմատած իւր կրած անբաւականութեանց հետ նա միանգամայն միւրթարուեցաւ : Մի ականատես ասում է, թէ Կրասովսկուն ատուծ պատիւներէ չո թէ նորա աստիճանին էին վերաբերում, այլ իւր սեպհական անձին :  
Տփլիսի Հայերից մի պատգամաւորութիւն շտապել էր յայտնել

նորան շնորհակալութիւն՝ Հայ ազգին մատուցած ծառայութեանց համար . դերեզմանի դուռը հասած ծերունի Եփրեմ կաթուղիկոսը օրհնեց նորան՝ անանկներին խնամք տանելու համար . Երեսն Արքեպիսկոպոսը էջմիածնի հոգևորականութեանը գլուխ կանգնած՝ բարի ճանապարհ մաղթեց նորան մի ճառախօսութիւնով , որի մէջ Կրասովսկուն անուանում է քրիստոնէութեան թշնամիների ձեռքից Մայր Աթոռի ազատարար . իսկ նորա ստորադրեալներն եւս ամբողջ գիտնորականութեան կողմից մի ուղերձով ներկայացրին մի մեծ պատկեր , որի մէջ փայլում էր Կրասովսկու բոլոր քաջագործութիւնները : . . .

Մի քանի ամիս հաղիւ էր անցել , որ Կրասովսկին հեռացել էր Կովկասից եւ ահա հերթը հասաւ Երեսն Արքեպիսկոպոսին :

Առաջին անգամն ամենքը գնահատում էին Երեսիսի գործունէութիւնը եւ նորա ցոյց տուած ծառայութիւնները : Այս բանում կաթուղիկոսի համակրութիւնը ի հարկէ մեծ գործ էր տեսնում :

Պարսկական պատերազմը վերջանալուց յետոյ թագաւորը պարգեւատրելով ծերունի Եփրեմ կաթուղիկոսին սուրբ Ալէքսանդր Ենվացու արմատեայ շքանշանով (առանց զարդարանքի) , մի ժամանակ էլ նոյն շքանշանը տուեց Երեսիսին հետեւեալ գրութեամբ (րեւկրիպս) .

« Ի վաղուց անտի , դրում է թագաւորը , դուք ցոյց էք տուել Ռուսաստանին ձեր անձնուիրութիւնը , նոյնը արիք մանաւանդ եւ ներկայ պարսկական պատերազմի ժամանակ . ուր ջերմեռանդութիւնով շարունակ մեր զօրքի հետ մասնակից լինելով՝ անխնայ անձնատուր էիք լինում՝ վտանգների : Գինեւրայ ասիւտանտ Պասկելիչը շատ անգամ է տեղեկութիւն տուել մեզ ձեր գովանի քաջագործութեանց մասին , յայտնելով՝ թէ ամբողջ պատերազմի ընթացքում դուք մեծ եռանդեամբ ծառայում էիք Ռուսաստանի չահերին , նորանով , որ աշխատում էիք ձեր հանճարեղ խորհուրդներովը , յորդորներովը եւ անձնական օրինակովը ջերմ համակրութիւն զարթնացնել եւ պահպանել Հայ ազգի մէջ զէպի մեր դահը : Ձեր այնչափ երեւելի ծառայութիւնները փառաւոր եւ նշանաւոր անելու եւ իմ առանձին բարեհաճութիւնը ամբողջ Հայ ազգին ցոյց տալու համար ես հաղորդ եմ անում ձեզ (պարգեւատրում եմ) սուրբ Ալէքսանդր Ենվացու շքանշանին » :

Սակայն շատ չանցաւ . Պասկելիչի յարաբերութիւնները Երեսիսի հետ փոխուեցան :

Հաստատ ապացոյցներ կան , որ պնդում են , թէ յարաբերութիւնները լարուելու գլխաւոր պատճառը Երեսիսի գրած մի թուղթն էր : Այդ նամակը նա գրել է Պասկելիչին նորա Դէյկարխան եղած ժամանակը : *Նամակի մէջ նա յայտնում է իւր կարծիքը Մակուայ խանութիւնը Ռուսաստանին միացնելու եւ պարսկական նոր սահմանազօր մասին :*

Ներսէսն ամենայն իրաւամբ կարծում էր, որ սահմանագիծը Նախի-  
ջեւանից սկսած՝ պէտք է իջնի դէպի արեւմուտք ոչ թէ Նրասխի ուղ-  
ղութիւնով, ինչպէս արդէն վճռուած էր. այլ պէտք է անց կենար  
ուղիդ գծով լեռնաշղթաների միջով ուղղակի մինչեւ տաճկական սահ-  
մանը, որպէս զի Պարսկաստանը մի սուր անկիւնով չը մտնէր Ռուսաց  
երկիրը: Պասկեւիչը նորա տուած այս խորհրդիցը վիրաւորուեց եւ չըն-  
դունեց:

1828 թուի մարտ ամսին նոցա երկուսի յարաբերութիւններն այն-  
քան լարուեցան, որ Պասկեւիչը Ներսխին հեռացրեց եւ չը թոյլ տուեց  
միանգամայն խառնուել Երեսնու նահանգի կառավարչութեան գործե-  
րում, միայն Դիրիչին տեղեկութիւն տուեց, թէ ինքը ամենայն քաղա-  
քավարութեամբ եւ առանց ինչ վիրաւորանքի է կատարել այս գործը . . . .

Այնուհետեւ Պասկեւիչը մի քանի շարունակ յայտարարութիւններ  
րով սկսեց կասկածելի ցուցանել (դիսկրեդիտովաս) Ներսխին թագաւորի  
աչքում ասելով՝ թէ ինչ որ նա կատարել է Ռուսաստանի համար եւ ինչ  
որ իւր անցեալ կեանքի մէջ արել է, այդ ամենը ոչ այլ ինչ էին, եթէ  
ոչ մի շարք խառնակչութիւններ (խնտիզներ) որ յառաջ էին եկել նորա  
ինքնիշխան բնաւորութիւնից եւ փառասիրութիւնից:

Այս յայտարարութիւնները վերջ ի վերջոյ հասան իւրեանց նսա-  
տակին:

Եւ ահա 1828 թուականի յուլիսին Դիրիչն արդէն այսպէս է դրում  
Պասկեւիչին. « Ձեր պայծառափայլութեան բազմադիմի յայտարարու-  
թիւններից թագաւոր կայսրը նկատել է, որ Ներսէս Արքեպիսկոպոսի  
գործողութիւնները շատ դէպքերում հակառակ են մեր կառավարութեան  
տեսակէտներին եւ օգուտներին, որին ապացոյց է հայ զինուորների  
տուած դանգաժը, որոնց Ներսէսն ինքնագլուխ պարտաւորացրել էր 25  
տարի էջմիածնումը ծառայել: Այս ամենը տեղիք են տալիս մտածելու,  
թէ գուցէ Ներսէսը որ եւ է գաղտնի նպատակներ ունի Ռուսաստանին  
միադրած նահանգների մասին: » Ահա ինչ է պատասխանում սորան Պաս-  
կեւիչը:

« Ներսխի բռնած ընթացքը ոչինչ մնասակար եւ հակասէրութիւ-  
նական մտադրութիւններ, կամ Ռուսաստանի միացած երկիրների մասին  
որ եւ է գաղտնի դիտաւորութիւններ չի արտայայտում: Ընդհակառակն  
պարսկական պատերազմի ժամանակ Ներսէսը միշտ պատրաստականութիւն  
էր յայտնում մեր օգտին ծառայելու եւ անձնուիրութիւն էր ցոյց տալիս  
դէպի Ռուսաստանը:

Բայց որքան եւ արդարացնեմ նորան այս մատուցը, եւ չեմ կարող  
լուել եւ չասել, թէ նորա փառասիրութիւնը (վրասօղեուրիկ) չաւ հեռու  
է սանում նորան իւր պարտականութիւնների, կոչումի եւ աստիճանի  
ուսմաններից եւ թէ նա ոչ միայն հոգեւոր, այլ եւ աշխարհակալ գոր-

ծերունիս եւս ցանկանում է գործել անսահման իշխանութեամբ . . .  
Վիճափառ Նիրեմ կաթողիկոսի զառամելութիւնը եւ ակարութիւնը մի-  
ջոց տուին նորան իւր ձեռքն առնել Հայոց եկեղեցական վարչութիւնը .  
նա այսքանովը չը բաւականացած՝ տարածում է իւր իշխանութիւնը եւ  
աշխարհական գործերի վերայ եւ կամենում է ցոյց տալ իրեն ինչպէս  
գլուխ եւ կառավարիչ ամբողջ Հայ ազգութեան :

Այս մասին այսքան մեծ էր նորա փառասիրութիւնը, որ նա սկսեց  
յուսագրական խրատուսագրեր (պրիկլանացիի) ուղարկել արասահմանու-  
եան Հայերին եւ մերձակայ տաճկական սահմանակից կառավարիչների  
հետ յարաբերութիւններ հաստատեց եւ ամեն ժամանակ ներկայացնում  
էր իրեն ինչպէս դրացի եւ Արփայայ գետի ափունքի տիրապետ միշտ .  
բաժանելով իւր սեպական օգուտները սէրութեան ընդհանուր շահերից .  
. . . Բացի դրանից շատ անգամ է ներսէսը արտայայտել իւր միակող-  
մանի դիտաւորութիւնները էջմիածնի եկամուտներն աւելացնելու հա-  
մար . թէկուզ նոքա մնաս եւս պատճառէին տէրութեանը : Նրեւանում  
պատահած յայտնի անբաւականութիւնների պատճառներից մէկն էլ այն  
էր, որ ներսէսը հէնց առաջին անգամից նկատեց, թէ ես որքա՛ն եմ  
աշխատում արքունի շահերը պաշտպանելու համար եւ հասկացաւ, որ ես  
ուստիկ դիմապրելու եմ իւր դիտաւորութիւններին, որով նա մտադիր  
էր հայ եկեղեցիներին սեպականացնելու իրանց չը պատկանած կալուածք-  
ներն ու եկամուտները : »

Իւր այս կարծիքին իբրեւ ապացոյց Պասկելիչը հետեւեալ դէպքն  
է յառաջ բերում : « Դեռ նոր Կողբայ աղահանքները տրուել էին կապա-  
լով, որ ներսէսը յայտնեց, թէ Յունաց Հերակլ կայսրը դեռ եւս 629  
թուականին, 1200 տարի յառաջ Կողբայ երրորդ մասը նուիրել է էջմի-  
ածնի վանքին : ներսիսի անհանգիստ բնաւորութիւնը (նակիօնիաստ կ  
ինստիգատ) բնականաբար յառաջ է եկել նորա փառասիրական ձգտումնե-  
րից եւ Հայ Եկեղեցու շահերը միակողմանի կերպիւ պաշտպանելու նպա-  
տակից :

Հայոց պործերի վերաբերութեամբ ներսիսի ունեցած անտեղի մեծ  
եռանդը կարող է արձագանք գտնել եւ ուրիշ նշանաւոր հայազգիների  
մէջ, որոնք սկզբից հաստատ միտք ունէին եւ այսօր էլ նոյն մտքին են,  
հետո պահել իւրեանց մեր օրէնքների ազդեցութիւնից եւ ցանկութիւն  
չունին ենթարկուել այն պարտականութիւններին, ինչ որ ուրիշ հպա-  
տակները կատարում են : Ասածներին անհերքելի ապացոյց են հիւսիսա-  
յին Կովկասում բնակեցրած Հայերը, որոնք մինչեւ ցայսօր ոչ միայն  
խոյս են տալիս բոլոր պարտականութիւններից, հիմնուելով Պետրոս  
առաջինի տուած արտօնութիւնների վերայ, այլ եւ աշխատում են ի  
մշտու արբուհի գանձարանի իւրեանց իրաւունքը տարածել եւ այն նոր  
տուն բնկած Հայերի մեծաց, որոնք մեծաց այս իրաւունքները չեն տու-

րածուում: Մի եւ նոյն ձգտումն էլ սպասելու է Անդրկովկասեան Հայերից ։

« Ինչ վերաբերում է Ներսիսին , աւելացնում է Պասկելիչը , ես մեծ դժուարութեան մէջ եմ : Քաղաքականութիւնն ինձ արգելում է բուրժուական հեռացնել նորան գործերից , բայց եթէ թողնենք նորան իւր ազդեցութեան մէջ , վանքական պահանջներն անվերջ կը լինին : Էւ գանձարանը կը դրկուի բոլոր այն արգիւնքներէն , որ կարող էր ունենալ » :

Թագաւորը վճռեց յետ կոչել Ներսիսին : Այս իսկ միջոցումը մեռաւ Բեսարաբիայի եւ նորա սահմանակից նահանգներէ Հայոց Գրիգոր Արքեպիսկոպոսը : Ներսէսը նշանակուեցաւ նորա տեղ : Յունիսի չորսին նա արդէն դուրս ելաւ Էջմիածնից գնալ իւր նոր պաշտօնասեղին՝ Քիչնեւ :

Ներսիսի հեռանալը խորին տխրութեան մէջ դրեց Հայերին եւ Եփրեմ կաթողիկոսին :

1828 թուի , հոկտեմբերի 8ին Եփրեմը մի նամակ է գրում թագաւորին , որի մէջ մի առ մի յիշում է Ներսիսի ծառայութիւնները , ասում է որ ինքն անձամբ պարտական է այնպիսի արժանաւոր արքեպիսկոպոսին եւ խնդրում է վերադարձնել նորան Էջմիածին , որպէս զի իւր կենդանութեան ժամանակ յանձնէ նորան կաթողիկոսական վարչութեան ղեկը :

Շատ հասկանալի է , թէ ի՞նչ տհաճութեամբ յանձն ասաւ Պասկելիչն այս միջնորդութիւնը :

Օտար դաւանութիւնների հոգեւոր գործերի գլխաւոր կառավարիչ Բլուզովին նա գրեց , որպէս թէ ծերունի կաթողիկոսի մտաւոր զօրութիւնը պակասել է , թէ ո՞ր աստիճանի է հասնում Ներսիսի համախոհների յանդգնութիւնը եւ վերջումն ասաց , թէ Ռուսաստանի չահերը եւ երկրի խաղաղութիւնը պահանջում են չթոյլ տալ Ներսիսին լինել ամենայն Հայոց ծայրագոյն կաթողիկոս :

Իւր կողմից Ներսէսը հասկանալով , որ Բեսարաբիայի վիճակը մի քաղաքավարի պատրուակ է Հայաստանի գործերից իրան պատճառով հեռացնելու համար , ինքն աշխատում է արդարացնել իրեն Բլուզովի աջքումը , եւ 1829 թուի յունուարի 21ին հետեւեալ նամակն է գրում նորան .

« 28 շարունակ տարի տնտեսման եռանդեամբ եւ անկեղծ հաւատարմութեամբ իմ անխոնջ հոգատարութիւնները եւ անխնայ աշխատութիւնները լարել եմ Ռուսաստանի օգտի եւ իմ համասեռ ազգիս բարեկենդանութեան համար : Ճակատագիրը տնօրինել էր ինձ իշխան Էրցիստովի օրից ամենուրեք դտնուելի պատերազմների մէջ եւ ամեն բանի մէջ Ռուսներին գործակից լինիլ : Այս քաղցը պարտականութիւնները կատարել

լով՝ իմ աշխատութիւնները, հոգատարութիւնները եւ անձնագոյնութիւնները փոխարէն ես շահուեցայ Ռուսաց կայսրները, գլխաւոր հրատարակները, իմ ազգի եւ նորա վեհափառ գլխի երախտագործութիւնները՝ պարսկական պատերազմի ժամանակ շատ զէպքերու մեծակից գանուել Պասկելիին, մանաւանդ Սարգարաբադն եւ Երեւանեյուս » :

« Կոմս Պասկելիւր, շարունակում է Ներսէսը, անբաւական էր նստմ միշտ այն գլխաւոր գեներալները, որոնց հետ ես զանազան ծերով յարաբերութիւններ էի անում, փոխանակ երախտագործական ւստտեաց՝ կասկածանքներ ծնան նորա մէջ իմ դէմ, իսկ այդ կասկածները յաւիտեանս երկպառակութիւն ձգեցին մեր մէջ : Իսկ կեւիչի մի անգեայ սխալը, որ արեց նա Պարսկաստանի հետ արածը, նորոգութեան ժամանակ մի նշանաւոր կէտի մէջ՝ Ռուսաստանի անոգծի վերաբերութեամբ, կատարեց արգէն իմ դէմ Պասկելիւրի ահաճութիւնը : »

Ներսիսի գրութեանը Պասկելիւր այսպիսի մանրամասն բացատրութիւններ է տալիս. « Ներսէս Արքեպիսկոպոսը, գրում է նա, որ մեր մէջ ծագած մեծ անբաւականութիւնների շարժառիթը, թէ գլխաւոր գեներալների հետ իւր ունեցած յարաբերութիւններն դորանով ինքը հաստատում է, որ մասնակից է եղել իմ դէմ եղած վուժիւններին (իմտիգիներին), որոնք այնպիսի ջանքերով կայսր

« Պէտք է կարծել, շարունակում է նա, որ Ներսէսը յիշելու իբրեւ թէ սանմանագծի վերաբերութեամբ գործած սխալներս, նուով հասկացնում է իւր այն ծիծաղելի ատաղարկութեան հաւաք՝ չընդունեցի, այն է՝ Մակուայ խանութիւնը մեր նաշանգներին չըցրի : Ահա ինչպէս պատահեցաւ : Դէյվարխանում եղած ժամանակ զարմանս իմ, ստանում եմ գեներալ Կրասովսկու մի յայտարարութիւն, որով գրում է թէ ինքը լսել է, որ Մակուայ խանութիւնը վերանում է Պարսկաստանին եւ թէ այս խնդրի վերաբերութեամբ ստացել է Ներսիսից մի հաղորդագրութիւն եւ ուղարկում է ի բայ յեցողութիւն իմ : Եթէ գեներալ Կրասովսկին պաշտօնական յայտարարութիւն չը գրած լինէր, ես նորա գրութիւնը կընդունէի իբրեւ կատակ, որովհետեւ գծուած էր երեւակայել թէ մի գեներալ լէյտի մի Արքեպիսկոպոսի հետ միասին մտածէին ինձ խորհուրդներ տալ ինչպիսի դաշն կապում ես, այն ինչ այդ մասին ես լիակատար իբրեւ եմ ստացել թագաւոր կայսրից : Ուստի եւ ես չը կամենալով թոյլ իմ իշխանութեան ներքոյ որ եւ է հանրապետական օրէնքներ, յամանութիւն գրեցի գեներալ Կրասովսկուն իրեն չը վերաբերեալ գորում խառնուելու մասին : Ներսիսի ատաղարկութեան մասին՝ Մա

— Թեթիւնը մեր գաւառներին միացնելու առթիւ՝ ես հետեւեալն եմ  
— ւում .

— 1) Թէ առանց Մակուայ խանութեան էլ Պարսկաստանի հետ իմ կա-  
— խաղաղութեան դաշինքը բաւականին օգտաւէտ է մեր համար :

— 2) Մակուայ խանութիւնը միաւորելով՝ մենք կուեննայինք մի անու-  
— սահման եւ

— 3) Մակուայ խանութեան ձեռք բերելը նորա համար էր ցանկալի  
— արիւսին , որ այն տեղ կայ մի հայկական հարուստ վանք : »

— Ձէ կարելի ասել , որ Պասկեւելչի յառաջ բերած պատճառները հա-  
— շտակական լինէին : Գոնէ նորա յացատրութիւնները իբրեւ թէ առանց  
— էլ իւր կապած պայմանը օգտաւէտ էր , թէ այն տեղ մի հարուստ  
— վանք կար , (որ ի հարկէ ցանկալի էր , որ մեր ձեռքն անցնէր) նորա  
— շած ինտրիգներն եւլն , այս բոլոր փաստերը բնաւ ոչինչ չեն հաստա-  
— քուում եւ ոչինչ էլ չեն հերքում :

— Բայց եւ այնպէս Նիքիւմ կաթողիկոսի միջնորդութիւնը Ներսի-  
— թէն էջմիածին փոխադրելու մասին մնաց առանց ուշադրութեան : Սա-  
— աւայն ճակատագրի կամքն էր , որ Ներսէսը վերադառնար Հայաստան կա-  
— թողիկոս եւ իւր երկոտասանամեայ գործունէութիւնովը ապացուցանէր  
— թէ ի սորին անձնութիւնը Ռուսաստանի անկեղծ շահերին : Արքա-  
— նով նա գլխաւորապէս պարտական էր այն ժամանակուայ պետական  
— անձներից մէկին՝ այն է իշխան Վօրոնցովին , որ Նովորոսիսկում գննե-  
— րալ գուբերնատօր եղած ժամանակ կարողացաւ մօտ ճանաչել Ներսիսին  
— եւ միանգամայն արդարացրեց նորան թագաւորի աչքում :

— Նիքիւմի մահից յետոյ 1831 թուին , երբ Պասկեւելչն դեռ հովիւ-  
— սումն էր , կաթողիկոսական գահը բարձրացաւ Յովհաննէսը : Բայց  
— 1842 թուին , երբ նա եւս մեռաւ , Ներսէսը միաձայն ընտրուեցաւ կա-  
— թողիկոս , այն ինչ միւս կանդիդատը՝ Երուսաղէմի Չաքարիա պատրի-  
— արզը 26 ձայնից միայն 17 ստացաւ : Երկու կանդիդատներն եւս առու-  
— ջարկուեցան թագաւորին հաստատութեան : Կայսրը հաստատեց Ներսի-  
— սին՝ « ինչպէս մի անձնատրութիւն , որին մատնացոյց արին միաձայն  
— եւ միահոգի թէ ներկայ եւ թէ բացակայ ընտրող պատգամաւորները » :

— Սակայն Ներսէսը նշանակուելով ժայրագոյն կաթողիկոս , կարող  
— եղաւ 1845 թուի Դեկտեմբերին հաղիւ հասնել Տփիսիս : Երկու ամիովջ  
— տարի ծանր հիւանդութեան պատճառաւ ստիպուեցաւ նա միակ Պետեր-  
— քուրգում :

— Անմոռանալի է մնացել Տփիսիսի համար Հայերի իւրևանց նորընտիր  
— կաթողիկոսին դիմաւորելը : Դեկտեմբերի 17ին առաւօտեան կայմակի  
— արագութեամբ լուր տարածուեցաւ , թէ կաթողիկոսը Տփիսիսից 76 աւ-  
— պարէջ հեռու գիչեցելու է : Անանուբումը Մի վայրկեանում խանութիւնը  
— փակուեցան , սուրն ու յեղ երեսի վերայ ի ողուեցան եւ ամեն մարդ ու

